

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀՐԱՉՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգադ թիվ 15028/16)

ՎՃԻՌ

Հոդված 10 • Արտահայտվելու ազատությունը • Իր դեմ հարուցված քաղաքացիական գործով վարույթի շրջանակներում դիմումատուից պահանջվել է վճարել վնասի փոխհատուցում այն բանից հետո, երբ նա հաղորդել է իր նախկին գործընկերոջ կողմից իրականացված ենթադրյալ կոռուպցիոն գործունեության մասին՝ վերջինիս ղեկավարության հետ մասնավոր նամակագրությամբ • Ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանության միջոցները չպետք է ավտոմատ կերպով դադարեն կիրառվել աշխատանքային հարաբերությունների դադարեցման պատճառով • *Գուջան ընդդեմ Մոլդովայի [ՄՊ] [Guja v. Moldova] [GC] գործով հաստատված է* • *Հալեթն ընդդեմ Լյուքսեմբուրգի [ՄՊ] [Halet v. Luxembourg]* գործում վերահաստատված ընդհանուր չափանիշների է սկզբունքների կիրառությունը • Ներպետական դատարանների կողմից ընդհանուր համատեքստը հաշվի չառնելը, մասնավորապես դիմումատուի կողմից ներքին հաշվետվության մեխանիզմի կիրառումը, որը պետք է լինի խիստ գաղտնի • Ձեռական պահանջներով նախատեսված՝ որդեգրված մոտեցումը կարող է զսպող ազդեցություն ունենալ • Հանրային շահերի վերաբերյալ դիմումատուի փաստարկները հաշվի չառնելը • Նախկին գործընկերոջ հեղինակությանը հասցվող ենթադրյալ վնասն ընդհանուր շահի նկատմամբ գերակայելու հանգամանքի առնչությամբ բացատրություն չներկայացնելը • Վնասի զգալի հատուցումը, որի հետեանքով առգրավվել է դիմումատուի բնակարանը եւ ավտոմեքենան, որն անհամաչափ ազդեցություն է ունեցել նրա վրա • Միջամտությունը «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում»

Պատրաստվել է քարտուղարության կողմից: Պարտադիր չէ Դատարանի համար:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

27 օգոստոսի 2024

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Հրաչյա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer], *Նախագահ,*

Թիմ Այքը [Tim Eicke],

Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović],

Բրանկո Լուբարդա [Branko Lubarda],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անյա Սիբերտ Ֆուա [Anja Seibert-Fohr],

Էն Լուիս Բորմանն [Anne Louise Bormann]՝ *դատավորներ,*

եւ Սիմեոն Պետրովսկի [Simeon Petrovski]՝ *Բաժանմունքի քարտուղարի
տեղակալ,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Հրաչյա Հարությունյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2016 թվականի մարտի 4-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 15028/16),

դիմումատուի՝ ազատ արտահայտվելու իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ բողոքի մասին Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու վերաբերյալ որոշումը,

կողմերի դիտարկումները եւ դիմումատուի դիտարկումներին եւ արդարացի փոխհատուցման պահանջներին ուղղված Կառավարության ուշացած պատասխանը գործի նյութերում չներառելու մասին որոշումը,

2024 թվականի հունիսի 25-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործը վերաբերում է դիմումատուի՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված ազատ արտահայտվելու իրավունքի ենթադրյալ խախտմանը՝ կապված վիրավորանքի եւ զրպարտության վերաբերյալ վարույթի հետ, որն իր դեմ հարուցվել է այն բանից հետո, երբ նա հայտնել է իր նախկին գործընկերոջ ենթադրյալ կոռուպցիոն գործունեության մասին՝ վերջինիս ղեկավարության հետ մասնավոր նամակագրությամբ:

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1953 թվականին եւ ապրում է Երեւանում: Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ պրն Ա. Ղազարյանը եւ տկն Մ. Բաղդասարյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը կարելի է ամփոփել հետեւյալ կերպ:

5. 2002 թվականից մինչեւ 2011 թվականը դիմումատուն աշխատել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») փակ բաժնետիրական ընկերությունում, որն այն ժամանակ Հայաստանում եղել է էլեկտրաէներգիայի միակ մատակարարը եւ գտնվել է Երեւանում: Կողմերը չեն վիճարկում այն փաստը, որ այդ ժամանակ «ՀԷՑ»-ը ռուսական «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» ընկերության (Ընկերություն) սեփականությունն էր: 2008 թվականից մինչեւ 2011 թվականի հոկտեմբերին իր հեռանալը դիմումատուն անվտանգության եւ վարչական հարցերով դեպարտամենտի ղեկավար էր:

6. Չնշված ամսաթվին ընկերությունն իր կայքի «Կոռուպցիայի դեմ պայքար» բաժնում հրապարակել է «Միասին պայքարենք կոռուպցիայի դեմ» վերնագրով հայտարարություն՝ կոչ անելով բոլոր նրանց, ովքեր տիրապետում են ընկերությունում կոռուպցիոն գործողությունների, այդ թվում՝ ցանկացած գործողության մասին տեղեկությունների, որն առաջացրել է կամ կարող է առաջացնել նյութական վնաս, հատուկ նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով հայտնել այդ տեղեկությունների մասին: Ընկերությունը խոստացել է անցկացնել անկախ քննություն եւ երաշխավորել է, որ բոլոր հաղորդումները կմնան անանուն եւ գաղտնի: Ինչպես հայտարարվել էր, հաղորդումները նախատեսվում էր ուղարկել ներքին աուդիտի բաժին, որը հաշվետու էր միայն ընկերության տնօրենների խորհրդին: Հետագա ցանկացած հարցման համար ցանկալի էր նշել կոնտակտային անձ եւ նամակագրության նախընտրելի եղանակ: Հաստատվելու դեպքում այդ տեղեկությունն ուղարկվելու էր անվտանգության հարցերի համար պատասխանատու համապատասխան թիմին եւ ընկերության տնօրինություն՝ պատշաճ միջոցներ ձեռնարկելու համար:

7. 2012 թվականի մարտի 26-ին դիմումատուն իր անձնական էլեկտրոնային փոստի հասցեից անստորագիր հաղորդում է ուղարկել հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

8. Նրա հաղորդումը, որում նշվել են ներգրավված անձանց լրիվ անունները, այնքանով, որքանով դա վերաբերել է գործին, ունեցել է հետեւյալ բովանդակությունը.

«1. [Վ.]Բ.-ն երկրում՝ որոշակի օղակներում, հայտնի է եղել «ՀԱԷՄ-Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնը զբաղեցնելու ժամանակ հայկական ԱԷՄ-ի անվրանգ շահագործման համար Ռուսաստանի կողմից տրամադրված 10 միլիոն ԱՄՆ դոլարի հափշտակման դեպքով: Դա լուսաբանվել է հայկական ՋԼՄ-ների կողմից: Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի նախկին պատգամավորի հայտնած տեղեկությունների՝ Վ.Բ.-ն եւ նրա տեղակալը՝ Վրաստանի քաղաքացի ոմն Մ.Ի.-ն, ներգրավված են եղել անդրազգային հանցավոր խմբում: Վերջինս կասկածվել է

Վրաստանի եւ Թուրքիայի օդատրակտայի հեղափոխական ծառայությունների հետ կապ պահպանելու մեջ: Նույն տեղեկությունների համաձայն՝ Վ.Բ.-ն կասկածվել է ՀԱԷՄ-ից ռադիոակտիվ նյութեր գողանալու մեջ՝ դրանք վաճառելու նպատակով:

2. «ՀԷՑ»-ի անվտանգության հարցերով տնօրինությունում իր աշխատանքի ընթացքում Վ. Բ.-ն կարողացել է ձեռավորել խումբ եւ ծառայեցնել այն իր սեփական շահերին: Այդ մասին են վկայում Վ.Բ.-ի նախաձեռնությամբ անվտանգության հարցերով տնօրինության կառուցվածքային փոփոխությունների մասին որոշումները [եւ] տնօրինության ավելի քան 16 աշխատակիցների աշխատանքից հեռացնելը [մի շարք] պաշտոնների կրճատման շինծու պատրվակով եւ նրանց փոխարեն իր սեփական մարդկանց, այդ թվում՝ իր հարազատներին աշխատանքի վերցնելը: Վերոնշյալ կրճատումներից հետո նոր աշխատակիցների համալրման հետեւանքով շարունակաբար աճել է տնօրինության [աշխատակիցների] թիվը: Վ.Բ.-ի նախաձեռնությամբ լուծարվել է տեխնիկական վերահսկողության ղեկավարամենտը, որը զբաղվել է տեղեկատվական անվտանգության հարցերով, եւ դրա փոխարեն ստեղծվել է շահերի պաշտպանության, իրավունքների եւ իրավաբանական օգնության ղեկավարամենտը, որը ղեկավարել է Վ.Բ.-ի զարմիկը: Էկոնոմիկայի եւ ֆինանսների ղեկավարամենտի աշխատակից Ա.Խ.-ն, որը պատասխանատու է եղել «ՀԷՑ»-ում ապրանքների եւ նյութական արժեքների վճարումների եւ փոխանցումների վերահսկողության համար, Վ.Բ.-ի զարմիկն էր: «ՀԷՑ»-ի շահերի պաշտպանության ղեկավարամենտի պետ Բ.Ա.-ն եւ Էկոնոմիկայի եւ ֆինանսների ղեկավարամենտի նախկին տնօրեն Կ.Մ.-ն զարմիկներ էին, իսկ գրասենյակային ծառայող Գ.Թ.-ն նրանց ազգականն էր:

3. Ստորեւ բերված են որոշ փաստեր, որոնք կարող են վկայել Վ.Բ.-ի՝ անձնական դրդապատճառներով պաշտոնեական դիրքի չարաշահման մասին: Դրանք հիմնականում վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Վ.Բ.-ն կատարում էր Անվտանգության հարցերով տնօրենի պարտականությունները, եւ շոշափվում էին «ՀԷՑ»-ի տնտեսական գործունեության նեղ շրջանակի հարցեր: Մյուս նյութերն ուսումնասիրման փուլում են եւ Ձեզ կորամադրվեն աշխատանքների ավարտից հետո:

4. 2007 թվականի հոկտեմբերի 24-ին «ՀԷՑ»-ի եւ «Ունիֆորմա» ՍՊԸ-ի միջեւ կնքվել է թիվ Ա-1085/07 3.263.400 [ՀՀ դրամ] գումարի պայմանագիր՝ Ընկերության անվտանգության աշխատակիցների համար 110 ձմեռային համազգեստ կարելու համար: Պայմանագրի 2.3 կետով նախատեսվել է 70% խոշոր կանխավճար (ողջամիտ սահմանաչափը կազմում է պայմանագրի գնի 30%-ից ոչ ավելի): Այդուհանդերձ 3.263.400 ՀՀ դրամ կազմող ամբողջ գումարը փոխանցվել է

«Ունիֆորմա» ՍՊԸ-ի հաշվեհամարին: Պայմանագրում սահմանված չեն եղել կապալառուի պարտավորությունների կատարման ժամկետներ:

«ՀԷՑ»-ի շահերի պաշտպանության դեպարտամենտը, որի ղեկավարն էի ես, իրականացրել է հավանական կապալառուի բիզնեսի հեղինակության աուդիտ: Պարզվել է, որ «Ունիֆորմա» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Մ.-ն ծնվել է 1986 թվականին, եւ որ նրա մայրը՝ Մ.Մ.-ն, որը ընկերության ոչ պաշտոնական ղեկավարն էր, չի ունեցել մշտական բնակության վայր եւ բնակվել է Երեւանում՝ վարձակալության հիմունքներով: Երեւան քաղաքի Արտաշիսյան 45/20 հասցեում գտնվող իրենց սեփական բնակարանը պարտքի մարման դիմաց փոխանցվել է Վարձավորի սեփականությանը: «Ունիֆորմա» ՍՊԸ-ն չի ունեցել ոչ արտադրական բազա, ոչ էլ անձնակազմ: Լ.Մ.-ն դեպարտամենտի տեսուչներին ցույց է տվել վարձակալված նկուղային փարածքում գտնվող արտադրամասը, որտեղ ստուգման պահին գտնվել են միայն օգտագործման համար ոչ պիտանի երկու հին կարի մեքենա: Տարածքը չի ունեցել եռաֆազ էլեկտրամատակարարում, եւ ըստ սպառողների էլեկտրոնային տվյալների բազայի՝ այսպես կոչված արտադրամասը 2006 թվականից ի վեր չի օգտագործել էլեկտրաէներգիա:

Աուդիտի արդյունքներով կազմվել եւ Վ.Բ.-ին տրամադրվել է հիմնավորված հաշվետվություն, որտեղ նշվել է «Ունիֆորմա» ՍՊԸ-ի հետ որեւէ գործարք կատարելու անթույլատրելիության մասին: «Ունիֆորմա» ՍՊԸ-ի փոխարեն որպես այլընտրանք ես Վ.Բ.-ին առաջարկել եմ Քանաքեռի կարի ֆաբրիկան, որը հանրապետությունում հայտնի է Պաշտպանության նախարարության, իրավապահ մարմինների եւ ոչ պետական պահանջարկային ծառայությունների համար համազգեստներ կարելով: Վ.Բ.-ն, սակայն, մերժել է իմ առաջարկը՝ առանց որեւէ հիմնավոր պատճառի:

Ինչպես ակնկալվում էր, «Ունիֆորմա» ՍՊԸ-ն չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Այդ կապակցությամբ Վ.Բ.-ին խորհուրդ եմ տվել «Ունիֆորմա» ՍՊԸ-ի մասին հայտնել իրավապահ մարմիններին: Սակայն Վ.Բ.-ն ձգձգել է հարցի լուծումն այն պատրվակով, որ ինքը կանխարգելիչ զրույցներ է ունեցել «Ունիֆորմա» ՍՊԸ-ի տնօրենի հետ, որ համոզի նրան կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Իմ համառ պահանջներից հետո՝ 2008 թվականի մարտի 24-ին, անվանագրության հարցերով տնօրինությունը թիվ ԴԲԿ-74 գրություն է ուղարկել Երեւանի ոստիկանություն՝ պահանջելով համապատասխան միջոցներ ձեռնարկել «Ունիֆորմա» ՍՊԸ-ի նկատմամբ: Նույն թվականի հուլիսին Ոստիկանության քննչական բաժինը որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի հիմքով (խարդախություն) քրեական գործ հարուցել «Ունիֆորմա» ՍՊԸ-ի նկատմամբ:

2008 թվականի հուլիսի 16-ին, ինձանից տեղեկանալով այդ մասին, Վ. Բ.-ն ստորագրել է Ոստիկանության քննչական բաժին է ուղարկել թիվ ԴԲԿ-204 գրությունը՝ «Ունիֆորմա» ՍՊԸ-ի դեմ մեր բողոքը հետ կանչելու պահանջով: Ոստիկանությունը բավարարել է պահանջը:

Վ.Բ.-ի գործողությունները կանխորոշվել են այն հանգամանքով, որ «Ունիֆորմա» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Մ.-ի նկատմամբ քրեական գործ հարուցելու դեպքում նրա մայրը, որը փաստացի այդ ընկերության տնօրենն էր եւ սերտ հարաբերություններ է ունեցել Վ.Բ.-ի հետ, կարող էր վկայություն տալ նրա դեմ՝ հայտնելով, որ նա է կեղծ պայմանագրի նախաձեռնողը:

Չնայած այն հանգամանքին, որ անհերքելիորեն բացահայտվել են կապալառուի կողմից իր պարտավորությունները չկատարելու փաստացի մտադրության ապացույցները, Վ.Բ.-ն չի կանխել «ՀԷՑ»-ի տնտեսական անվտանգության իրական սպառնալիքը, եւ հակառակը, չարաշահելով իր պաշտոնական դիրքը՝ խարդախությամբ նպաստել է դրա իրագործմանը: Նա խոչընդոտել է «ՀԷՑ»-ի նկատմամբ կատարված խարդախության փաստերը բացահայտելու եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ընթացքը:

Ավելի ուշ նյութերը փոխանցվել են «Տեր-Տաճատյան, Գրիգորյան եւ Վահանյան» իրավաբանական ընկերությանը՝ դատական կարգով 3.263.400 ՀՀ դրամ գումարը փոխհատուցելու համար:

3.263.400 ՀՀ դրամի չափով ՀԷՑ-ի վնասը մինչ օրս չի հատուցվել:

5. 2007 թվականին Վ.Բ.-ի միջնորդությամբ Անվտանգության տնօրինության տեղեկատվական-վերլուծական դեպարտամենտի պետի պաշտոնը համալրել է Հ.Ա.-ն: Ավելի ուշ, Հ.Ա.-ի փեսան՝ Վ.Զ.-ն, նույնպես ընդունվել է աշխատանքի այդ դեպարտամենտում՝ որպես փորձագետ:

6. [Հ.] Ա.-ն մեր ընկերության կապալառուն էր՝ «Սեկանս» ՍՊԸ-ի հիմնադիրը: Վ. Բ.-ն պետք է տեղյակ լիներ այդ մասին, քանի որ նրանք ընկերներ էին: Բացի այդ, «Սեկանս» ՍՊԸ-ն մասնակցել է հաղթող է ճանաչվել «ՀԷՑ»-ի կողմից հայտարարված մրցույթներին, իսկ Վ. Բ.-ն եղել է մրցութային հանձնաժողովի կազմում եւ իրականացրել է լոբբինգ դրա շահերի համար: Հ.Ա.-ին աշխատանքի վերցնելով՝ Վ.Բ.-ն խախտել է «ԻՆՏԵՐ ՌԱՕ ՀԷՑ»-ի գլխամասի անվտանգության դեպարտամենտի հրահանգները՝ կապալառուների հետ փոխկապակցվածությունը բացառելու վերաբերյալ:

.....

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն փաստին, որ «Սեկանս» ՍՊԸ-ի հաշվեհամարին փոխանցվել է 5 միլիոն ՀՀ դրամ, որը գերազանցում է [2006 թվականի հոկտեմբերի 9-ի] թիվ Ա-552 պայմանագրով վճարման ենթակա գումարը: Երբ «Սեկանս» ՍՊԸ-ի հետ Վ.Բ.-ի գործարար հարաբերությունները դարձել են քննարկման առարկա «ՀԷՑ»-ում, Հ.Ա.-ն հրաժարական է տվել: Վերջինս հրաժարվել է «ՀԷՑ»-ին վերադարձնել պայմանագրի արժեքից ավել վճարված լրացուցիչ գումարը եւ հայտարարել է «Սեկանս» ՍՊԸ-ի սնանկության մասին: Վ.Բ.-ի ղեկավարած ներքին վերահսկողության ծառայությունն իրականացրել է ելքային վճարումների վերահսկողություն՝ այդ վերահսկողության համար պատասխանատու աշխատակցի անձնական համակարգչից մուտք գործելով հաշվապահական հաշվառման ծրագրային ապահովման համալիր գործիքակազմ, եւ այդ ծառայությունը կարող էր կոծկել պայմանագրին չհամապատասխանող նշված գումարի փոխանցման գործարքը: «Սեկանս» ՍՊԸ-ի հետ գործարքները կատարվել են խարդախ ճանապարհով, որի հետեւանքով «ՀԷՑ»-ը կրել է վնասներ:

7. 2007 թվականի հունվարին ստացվել են օպերատիվ տեղեկություններ այն մասին, որ «ՀԷՑ»-ի «Ղարս» մասնաճյուղի տնօրեն Ա.-ն Վ.Բ.-ի օժանդակությամբ որոշել է գնել Գյումրիի Շարաթայլյան 1 հասցեում գտնվող մասնաճյուղի երկհարկանի վարչական շենքը՝ այն հյուրանոցի վերափոխելու նպատակով: *Վերոնշյալ տեղեկությունները ստուգելուց հետո պարզվել է, որ Երեւանի բնակիչ ոմն Գ.Մ.-ն իսկապես դիմել է «ՀԷՑ»-ին՝ վարչական շենքը քանդելու եւ 5.300.00[0] ՀՀ դրամով վաճառելու խնդրանքով: Գյումրիի անշարժ գույքի գործակալությունների պաշտոնական տվյալների համաձայն՝ քաղաքի կենտրոնում մեկսենյականոց բնակարանի արժեքն այդ ժամանակահատվածում կազմել է 4-5 միլիոն դրամ, այսինքն՝ երկհարկանի վարչական շենքի գինը եղել է մեկսենյականոց բնակարանի գնին համարժեք: Ակնհայտ է, որ այս գործարքը չի բխել «ՀԷՑ»-ի տնտեսական շահերից: Ես հայտնել եմ Վ.Բ.-ին, որ տեղյակ եմ գործարքի մասին՝ առանց ակնարկելու այդ գործարքում նրա մասնակցության մասին, եւ առաջարկել եմ նրան միջոցներ ձեռնարկել այն չեղյալ հայտարարելու կամ վախճանից հետո՝ արժեքը վերանայելու համար: Որպես հիմնավորում ներկայացրել եմ Գյումրիում անշարժ գույքի գների վերաբերյալ տվյալները: Վ.Բ.-ն ինձ հավաստիացրել է, որ պատշաճ կերպով կարձագանքի իմ առաջարկին: Ավելի ուշ տեղեկացել եմ, որ [Հայաստանի] Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը բավարարել է «ՀԷՑ»-ի պահանջը: Վերանորոգված երկհարկանի բարվոք վիճակում գտնվող շենքը*

5.300.000 դրամով վաճառվել է ոչ թե Գ.Մ.-ին, այլ Երեւանի բնակիչ ոմն Ն.Պ.-ին, քանի որ Գ.Մ.-ն հրաժարվել է վարչական շենքը գնելու իր իրավունքից: Պարզվել է, որ Ն.Պ.-ն «Ղարս» մասնաճյուղի տնօրեն Ա.-ի կինն է: Վ.Բ.-ն ունեցել է ընկերության գլխավոր տնօրենի անունից Գ.Մ.-ի դիմումն ուսումնասիրելու ընթացքում գործարքը կասեցնելու կամ առնվազն շենքի գինը բարձրացնելու նպատակով այն վերանայելու բոլոր լիազորությունները: Այնուամենայնիվ, Վ.Բ.-ն ոչինչ չի ձեռնարկել, քանի որ մասնակից է եղել այդ կասկածելի գործարքին եւ առաջնորդվելով շահադիպական նկատառումներով՝ շահագրգռված է եղել այն իրականացնել ի վնաս «ՀԷՑ»-ի տնտեսական շահերի:

8. 2008 թվականի մայիսին տնօրեն Ա.- ի հրամանով «Ղարս» մասնաճյուղի պահեստից ապամոնտաժել են 10 կՎտ հզորությամբ 300 մեկուսիչ (մեկ մեկուսիչի հաշվեկշռային արժեքը կազմում է [25-35 000 դրամ]) եւ մասնավոր բեռնափոխակ ուղարկվել Արագածոտնի մարզ, որտեղ կառուցվում էր Վ.Բ.-ի փոքր հիդրոէլեկտրակայանը: Մասնաճյուղի տնօրեն Ա.-ն մասնաճյուղի 3-4 էլեկտրական ցանցերի (Ախուրյան, Արթիկ, Աշոցք, Ամասիա) ղեկավարներին հանձնարարել է լրացնել մեկուսիչների տեղադրման տեխնիկական բնութագրերի կեղծ տեղեկաթերթիկները: Նրա ապօրինի հրամանը կատարվել է: Այդուհանդերձ, մասնաճյուղի օպերատիվ-դիսպետչերական կառավարման ծառայության եւ էլեկտրական ցանցերի գրանցումների մատյանում որեւէ գրառում չի արվել 10 կՎտ հզորությամբ գծերի անջատման մասին, որոնց վրա ենթադրաբար կատարվել է մեկուսիչների փոխարինումը: Առանց այդ գծերն անջատելու հնարավոր չէր լարման փակ հին մեկուսիչները փոխարինել նորերով: Եթե համեմատենք 2008 թվականի մայիս-նոյեմբեր ամիսների տեխնիկական բնութագրերի տեղեկաթերթիկներն այդ ժամանակահատվածի անջատումների ժամանակացույցի հետ, ապա կունենանք մեկուսիչների գողության ապացույցները:

Այս պարագայում խոսքը ոչ միայն մասնաճյուղի տնօրենի հետ նախնական համաձայնությամբ Վ.Բ.-ի կողմից «ՀԷՑ»-ի գույքի պարզ գողության, այլ մասնաճյուղի մի շարք աշխատակիցների՝ հանցագործության կատարման մեջ ներգրավվածության մասին է:

2009 թվականին պայմանագիր կնքելով «ՀԷՑ»-ի հետ՝ Վ.Բ.-ին եւ նրա եղբորը պատկանող փոքր հիդրոէլեկտրակայանը հանձնվել է շահագործման:

Վ.Բ.-ն եւ նրա եղբայրը փոխկապակցված կապալառուներ են եւ վերջնական շահառուներ: Վ.Բ.-ն կարետոր պաշտոն է զբաղեցնում «ՀԷՑ» ՓԲԸ-ի անվտանգության

տնօրինությունում, եւ նրա դիրքորոշումը հակասում է էներգետիկայի ոլորտում կոռուպցիայի եւ չարաշահումների դեմ պայքարի լրացուցիչ միջոցառումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության նախագահի եւ վարչապետի վերջին որոշումների բնույթին, ինչը նաեւ ամբողջությամբ վերաբերում է արտասահմանյան ակտիվներին:

9. Պայմանագրեր են կնքվել «ԱՌՍԲ ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ի հետ «անվտանգության համակարգի մատակարարման, տեղադրման, մոնիթինգի, ծրագրավորման, գործարկման, կարգավորման եւ շահագործման համար»՝

- 2007 թվականի մարտի 2-ի թիվ 82/07 պայմանագիր՝ 4.461.120 դրամ արժեքով
- 2007 թվականի մարտի 5-ի թիվ 120/07 պայմանագիր՝ 2.960.000 դրամ արժեքով
- 2007 թվականի մարտի 13-ի թիվ 142/07 պայմանագիր՝ 2.268.600 դրամ արժեքով:

Պայմանագրերի համաձայն՝ յուրաքանչյուր պայմանագրի արժեքի 50%-ի չափով գումար է փոխանցվել կապալառուի հաշվին՝ որպես կանխավճար: Համաձայնագրերում բացակայել են դրանց անհրաժեշտության օբյեկտիվ հիմնավորումները: Մասնավորապես՝

- 2007 թվականի մարտի 2-ի թիվ 82/07 պայմանագրին կից թիվ Փ-398/07 համաձայնագրով պայմանագրի գինը սահմանվում է 6.560.520 դրամ
- 2007 թվականի մարտի 5-ի թիվ 120/07 պայմանագրին կից թիվ Փ-393/07 համաձայնագրով պայմանագրի գինը սահմանվում է 4.378.800 դրամ
- 2007 թվականի մարտի 13-ի թիվ 142/07 պայմանագրին կից թիվ Փ-397/07 համաձայնագրով պայմանագրի գինը սահմանվում է 2.726.400. դրամ:

Հայկական շուկայում գործում է անվտանգության տեխնիկական միջոցների տեղադրման մասնագիտացված 5 ընկերություն: Ըստ իմ կողմից իրականացված մշտադիտարկման տվյալների՝ նմանատիպ ծառայություններ մատուցող եւ աշխատանքներ կատարող այլ ընկերությունների գները զգալիորեն ցածր են եղել:

2008 թվականի դեկտեմբերին ես իրականացրել եմ այդ ընկերությունների մշտադիտարկում՝ «ԱՌՍԲ ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ի կողմից «ՀԷՅ» ՓԲԸ-ի համար տեղադրված ուղեփակոցի տեղադրման համար նրանց գնային առաջարկներին ծանոթանալու համար:

«Էլիպս ՋիԷյ»՝ 1.000.000 դրամ (առանց ԱԱՀ-ի).

«ԴիԷս Սիսթեմս»՝ 1.014.000 դրամ (առանց ԱԱՀ-ի).

«Սեքյուրիթի սերվիս»՝ 1.512.000 դրամ (առանց ԱԱՀ-ի).

«Մայքրոռոլ»՝ 898.000 դրամ (առանց ԱԱՀ-ի).

«ԱՌՄԲ ԶՎԵԶԴԱ»՝ 2.890.000 դրամ (առանց ԱԱՀ-ի):

Արդյունքները մեկնաբանելու անհրաժեշտություն չկա. բոլոր դեպքերում «աղկապներ» ստանալու նպատակով գործարքները նախաձեռնող հայտնի Վ.Բ.-ն գինն ուռճացրել է: Հարկ է նշել, որ տեխնիկական պարամետրերով «ԱՌՄԲ ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ի կողմից տեղադրված ուղեփակոցը չի գերազանցել այլ ընկերությունների առաջարկած նմանատիպ ուղեփակոցներին: Իրականում՝ հակառակը: Տեղադրումից հետո ուղեփակոցը չի աշխատել մինչև 2009 թվականի ապրիլ ամիսը, իսկ տեխնիկական բնութագրերի տեղեկաթերթիկը մենք ստորագրել ենք միայն 2009 թվականի հունիսին՝ լուրջ թերությունները վերացնելուց հետո:

10. 2009 թվականի փետրվարի 10-ի թիվ ԴԲԿ-26 հրահանգի համաձայն՝ ստեղծվել է անվտանգության եւ վերահսկողության տնօրինության մի շարք աշխատակիցներից կազմված հանձնաժողով՝ գույքի համարների (շտրիխ կոդերի) եւ փոխարկիչով մուտքի համակարգի քարտերի գույքագրում իրականացնելու համար: Ես նշանակվել եմ հանձնաժողովի նախագահ: Ստուգման ընթացքում պարզվել է, որ 2009 թվականի փետրվարի 10-ի դրությամբ այլ փաստաթղթերի շարքում, Վ.Բ.-ի կողմից ստորագրված փաստաթղթի համաձայն, «ՀԷՑ»-ի տեղեկատվական համակարգերի դեպարտամենտը Անվտանգության եւ վերահսկողության տնօրինությանն է փոխանցել թվով 662.716 գույքագրման համար: Ստուգման պահին բացակայող գույքագրման համարների թիվը կազմել է 54,034:

Դեպարտամենտի կողմից իրականացված ստուգումների արդյունքում պարզվել է, որ Վ.Բ.-ն կորած համարները չի փոխանցել դեպարտամենտին: Բացի այդ, պարզվել է, որ Վ.Բ.-ն, չլիազորված բանավոր կարգադրությամբ օբյեկտների համարները գրանցելու եւ դրանք տրամադրելու պարտավորությունը փոխանցել է Տեխնիկական վերահսկողության (Տեղեկատվական անվտանգության ապահովման) դեպարտամենտի ստորաբաժանումներին, ինչը հակասում է «ՀԷՑ»-ի գլխավոր տնօրենի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 6 «Կարգադրությունների արձակման մասին» որոշմանը:

Տնօրինությանն առաջարկել եմ իրականացնել ստուգման միջոցառումներ՝ գույքի համարների կորստի եւ գտնվելու վայրի հանգամանքները պարզելու համար, սակայն այդ առաջարկը մերժվել է: Ավելի ուշ ես հայտնաբերեցի, որ Վ.Բ.-ն լրացուցիչ կետ է ավելացրել Տեխնիկական հսկողության դեպարտամենտի պետի պաշտոնական հրահանգների էլեկտրոնային փարբերակում, որտեղ դեպարտամենտի պետի պարտականությունների շարքում նշվել է ապրանքների եւ նյութական արժեքների օրինական փոխանցման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությունը, ինչը ենթադրում էր ստորաբաժանման ներկայացուցիչներին շտրիխ կոդերի տրամադրում:

Այդ պարտավորությունը վերապահվել է Անվտանգության տնօրինության ֆինանսների եւ էկոնոմիկայի հարցերով դեպարտամենտին: Հետեաբար Վ.Բ.-ն գույքի համարների բացակայության պատասխանավորությունից խուսափելու համար կատարել է կեղծարարություն, իսկ դրա պատասխանավորությունը դրել է Դեպարտամենտի պետի վրա:

11. 2006 թվականի վերջին որոշում է կայացվել «ՀԵՑ»-ի ֆիզիկական անվտանգության գործառույթները առանձնացնել որպես առանձին իրավաբանական միավոր: Մրցույթի միակ մասնակից «Սայգա» մասնավոր պահնորդական ընկերությունը [ՄՊԸ], ներկայացրել է համոզիչ հայտ, եւ նրա հետ փարբեր ժամանակներում կնքվել են պայմանագրեր 71.490.000 ՀՀ դրամ արժեքով (2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ Ա-802/07, 2008 թվականի հուլիսի 2-ի թիվ Ա-407/07 , 2009 թվականի նոյեմբերի 2-ի թիվ Ա-1186/09 պայմանագրեր): «ՀԵՑ»-ի դեպարտամենտի պահպանության աշխատակիցները [եւ] ծառայողական շները տեղափոխվել են «Սայգա» մասնավոր պահնորդական ընկերություն [ՄՊԸ]: Ավելի ուշ ընկերությունը գնել է բջջային հեռախոսներ՝ անձնական հաղորդակցության համար, եւ 60 լապտեր՝ ՄՊԸ-ի աշխատակիցների համար:

2008 թվականից մինչեւ 2010 թվականը լրացուցիչ ծառայությունների մատուցման համար վերոնշյալ ֆիքսված գումարը երբեմն գերազանցել է 100 միլիոն ՀՀ դրամը: Համոզվելու համար, որ Վ.Բ.-ն «ատկապներ» է ստացել «Սայգա» ՄՊԸ-ից, բավարար է ուսումնասիրել նրա հետ կնքված պայմանագրերը կոռուպցիայի հավանականության տեսանկյունից: Որպես «ատկապներ» ստանալու ապացույց կարելի է բերել մի օրինակ, թե ինչպես է Վ.Բ.-ն մոլորության մեջ գցել «ՀԵՑ»-ի գլխավոր տնօրեն Է. Բ.-ին Երեւանում պահնորդական ծառայությունների շուկայական գների մասին տեղեկություններ տրամադրելիս:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

Ստորեւ ներկայացված է հատված 2011 թվականի փետրվարին Է. Բ.-ին տրամադրված տեղեկանքից.

«Սայգա» ՄՊԸ-ի կողմից մեկ պահակակետի տեղադրման համար ծախսերը մեր ընկերության համար կազմում է մոտ 634.920 [դրամ], ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Անվտանգության ծառայությունների շուկայի մեր մշտադիտարկումը ցույց է տվել, որ հանրապետությունում մասնավոր անվտանգության եւ քննչական ծառայությունների մասին օրենքի բացակայության պայմաններում շուկայում առկա է 2-3 մասնակիցների, ներառյալ՝ «Սայգա» ՄՊԸ-ի եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության ծառայության գլխավոր վարչության մենաշնորհ, որոնք ունեն համապատասխան լիցենզիաներ, մասնագիտացված անձնակազմ եւ նյութատեխնիկական բազա: Պահակակետի տեղադրման միջոցով տարածքի ֆիզիկական պահպանության ծախսերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական նկատառումներից ելնելով եւ հաշվի առնելով մատուցվող ծառայությունների որակը՝ «Սայգա» ՄՊԸ-ի պայմաններն ավելի ընդունելի են մեր ընկերության համար: Մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության ծառայության գլխավոր վարչություն՝ մեկ շուրջօրյա պահակակետի ծառայության արժեքը կազմում է 552.296 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

«Արմորիլ» ՄՊԸ՝ մեկ շուրջօրյա պահակակետի ծառայության արժեքը կազմում է 620.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

«Ռուսալ Արմենալ»-ի վարչության անվտանգության ծառայություն՝ մեկ շուրջօրյա պահակակետի ծառայության արժեքը կազմում է 957.000 ՀՀ դրամ:

Տեքստի այս հատվածից հետեւում է, որ ընկերությունների կողմից մատուցվող անվտանգության ծառայությունների գների միջեւ էական անհավասարակշռություն չի եղել՝ բացառությամբ «Ռուսալի» ընկերության, որը չպետք է ներառվեր այս ցուցակում, քանի որ այն անվտանգության ծառայություններ մատուցող ընկերություն չէր: Սուտ տեղեկությունը եղել է այն, որ «Սայգա» ՄՊԸ-ի ծառայությունների արժեքը ներկայացվել է 30-40.000 դրամով պակաս, իսկ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության ծառայության գլխավոր վարչության ծառայությունները ուռճացվել են 120.000 դրամի չափով, իսկ «Արմորիլ» ՄՊԸ-ի ծառայությունները՝ 180.000 դրամի չափով: Բացի այդ, չի նշվել այն մասին, որ երկու կազմակերպություններն էլ իրենց հաշվին անվտանգության աշխատակիցների

համար առաջարկել են տրամադրել համազգեստ, մարտական եւ տրավմատիկ զենք, անձնական պաշտպանության հատուկ միջոցներ, կապի միջոցներ եւ սեփական ուժերով գիշերային պարեկություն, ինչը եւս եղել է բարձր ծախսերի պատճառը: Վ.Բ.-ի կողմից գլխավոր տնօրենին մոլորեցնելու նպատակը եղել է պահնորդական ծառայությունների անվտանգության բարձր ծախսերն արդարացնելը:

12. 2011 թվականի մայիս ամսվա դրությամբ «ՀԷՑ»-ի «Գեղամա» մասնաճյուղի Աբովյանի էլեկտրական ցանցից տարբեր ժամանակներում (հիմնականում նախորդ 3 տարիների ընթացքում) սպառողներից գողացվել է 120 էլեկտրաէներգիայի հաշվիչ, ինչը գերազանցում է նախորդ 10 տարիների ընթացքում բոլոր մասնաճյուղերից գողացված հաշվիչների ընդհանուր թիվը): *Երեք-չորս դրվագների մասին հաղորդվել է ոստիկանության մարզային վարչություն: Մեր ուսումնասիրությունները եւ ոստիկանության կողմից իրականացված ստուգումները լուրջ հիմքեր են տվել ենթադրելու, որ էլեկտրաէներգիայի հաշվիչները գողացել են Աբովյանի էլեկտրացանցի էլեկտրիկները՝ էլեկտրաէներգիայի գողության փաստը թաքցնելու նպատակով: 2011 թվականի մայիսին՝ կատարված գողության հետ կապված «Գեղամա» մասնաճյուղի պահեստի ստուգման ժամանակ, փակ տարածքներից մեկում հայտնաբերել են մեծ քանակությամբ զրոյացված էլեկտրաէներգիայի հաշվիչներ՝ պետական ստանդարտի թարմ կապարակնիքներով:*

[Ստորեւ ներկայացված լուսանկարում դիմումատուն պատկերված է մի սենյակում, որտեղ կան մի քանի էլեկտրաէներգիայի հաշվիչներ]:

Ես գողոնի մասին հայտնել եմ Վ.Բ.-ին եւ առաջարկել գույքագրել դրանք՝ դրանց ծագումը պարզելու եւ դրանց շարքում գողացված էլեկտրական հաշվիչները գտնելու համար, ինչպես նաեւ ոստիկանություն ուղարկել ամփոփ հաղորդում՝ Աբովյանի «Գեղամա» մասնաճյուղի սպառողների էլեկտրական հաշվիչների գողության բոլոր դեպքերի վերաբերյալ: Վ.Բ.-ն համաձայնել է եւ խոստացել հարցին անդրադառնալ ավելի ուշ: Ավելի ուշ տեղեկացել եմ, որ էլեկտրաէներգիայի հաշվիչների այդ կոյտն արագ դուրս է բերվել մասնաճյուղի տարածքից: Դա միայն ամրապնդում է այն կարծիքը, որ Վ.Բ.-ն աջակցում էր «Գեղամա» մասնաճյուղին եւ ոչ առանց շահադիտական նկատառումների:

13. 2007 թվականին Անվտանգության տնօրինությունը ճշգրիտ տեղեկություններ ուներ Էջմիածնի էլեկտրացանցի էլեկտրաէներգիայի սպառողներից զանգվածային ուժացված գումարների զանձման մասին: Այդ ժամանակ ընկերության գլխավոր տնօրենի հրամանով Էջմիածնի էլեկտրացանցի էլեկտրաէներգիայի

վաճառքի պատասխանատվությունը կրում էր «ՀԵՑ»-ի վաճառքի տնօրենը, այսինքն՝ նա անձամբ էր պատասխանատվություն կրում ուժնացված գումարների գանձման համար: Այդ մասին գլխավոր տնօրենի համար պատրաստվել են զեկույցներ: Կառավարչի ուշադրությունը հրավիրվել է այն փաստին, որ որոշակի հանգամանքներում այն սպառողների դժգոհությունը, որոնց էլեկտրաէներգիայի վճարներն ուժնացվել են, կարող էր վերածվել զանգվածային բողոքների, եթե միջոցներ չձեռնարկվեին հրավիճակը շտկելու համար: Վաճառքի տնօրենին պատասխանատվությունից զերծ պահելու նպատակով Վ.Բ.-ն այդ տեղեկությունների մասին չի զեկույցել գլխավոր տնօրենին: 2011 թվականի ապրիլին հրավիճակը կտրուկ սրվել է: Գայ գյուղի սպառողներն ընկերության դեմ ներկայացրել են հրապարակային բողոքներ, որոնք լայն արձագանք են գտել հանրության շրջանում և վնասել են ընկերության հեղինակությունը: Վ. Բ.-ի անգործությունը բացատրվել է այն հանգամանքով, որ նա վաճառքի բաժնում աշխատանքի էր ընդունել իր որդուն, որն այդ ժամանակ ուսանող էր: Հարկ է նշել, որ 2008 թվականից սկսած՝ տնօրինությունը դադարեցրել է էլեկտրաէներգիայի գողությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ մշտական աշխատանքների իրականացումը: Վ.Բ.-ն խոչընդոտել է գլխավոր տնօրենի երկու հրամանների կատարումը, որոնք վերաբերել են էներգասպառող օբյեկտների մշտադիտարկմանը և տարածքի շահագործմանը համապատասխան օբյեկտի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը: Այս միջոցառումներն օգնել են արդյունավետորեն վերահսկել սպառումը և ժամանակին կանխել էլեկտրաէներգիայի գողությունները:

14. 2009 թվականի օգոստոսի 3-ին «ՀԵՑ»-ը մոտ 75-80 միլիոն դրամ է փոխանցել «Մանաս» ընկերության հաշվեհամարին, իսկ 2009 թվականի օգոստոսի 5-ին նույն ընկերության հետ կնքել է թիվ Ա-756 պայմանագիրը՝ Երեւան քաղաքի Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 9 հասցեում շինարարական աշխատանքների իրականացման մասին: Սակայն փաստն այն է, որ պայմանագրի ստորագրման պահին աշխատանքներն արդեն կատարված և ավարտված են եղել այլ ընկերության կողմից («Ռենկո» ընկերությամբ առնչությամբ վարահ չեմ): Անվտանգության ծառայությունը ո՛չ վճարման հանձնարարականների վերահսկողության փուլում, ո՛չ գործարքի համաձայնեցման ընթացքում, ո՛չ էլ մրցույթի անցկացման ընթացքում չի արձանագրել ինչպես այս փաստը, այնպես էլ ընկերության տնտեսական անվտանգության սպառնալիքը: Սա ոչ թե Վ.Բ.-ի պրոֆեսիոնալության բացակայության, այլ վերահսկվող ստորաբաժանումների հետ նրա փոխկապակցվածության և որպես հետեւանք սպառնալիքին համարժեք արձագանքելու անհնարինության արդյունք է:

Անվտանգության եւ վերահսկողության տնօրինության գործունեության թերեւս ամենաապշեցուցիչ գնահատումը «ՀԷՑ» ՓԲԸ-ում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության կողմից իրականացվող մշտական ստուգումների արդյունքներն են եւ 10 միլիարդ ՀՀ դրամ փութանքի հավանականության հեռանկարը:

Խնդրում եմ ուսումնասիրել ներկայացված փաստերը եւ տեղեկացնել ինձ արդյունքների մասին: Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ առավելագույն ջանքեր ներդնել Ձեզ օգնելու համար:

Կից ներկայացվում է երեք նիշք»:

9. 2012 թվականի հուլիսի 11-ին ընկերության ներքին անվտանգության տնօրինության տնտեսական անվտանգության եւ վարչական հարցերով տնօրեն Յ.Մ.-ն հանդիպում է ունեցել դիմումատուի հետ եւ նրան ցույց է տվել հաղորդումը՝ հարցնելով, թե արդյոք նա է գրել այն: Երբ դիմումատուն հաստատել է, որ ինքն է գրել, Յ.Մ.-ն խնդրել է նրան ստորագրել փաստաթղթի օրինակը, եւ դիմումատուն ստորագրել է այն:

10. 2012 թվականի հուլիսի 18-ին դիմումատուի հաղորդումը, որը նշագրված է եղել որպես «գաղտնի», փոխանցվել է «ՀԷՑ»-ի անվտանգության եւ վերահսկողության տնօրեն Գ.Մ.-ին, որին խնդրել են ստուգել տեղեկությունները: Հաջորդ օրը Գ.Մ.-ն դիմումատուի հաղորդումը ներկայացրել է Վ.Բ.-ին եւ պահանջել է ներկայացնել բացատրություններ:

11. Համաձայն «ՀԷՑ»-ում կատարված ներքին քննության արդյունքների (այնքանով, որքանով դա արտացոլվում է ներպետական դատարանների որոշումներում), անվտանգության տնօրինության տեղեկատվական եւ վերլուծական դեպարտամենտի պետ Հ.Ա.-ն հերքել է 5-րդ հայտարարությունը: Այն է՝ երբ նա աշխատանքի է ընդունվել որպես փորձագետ «ՀԷՑ»-ում, Վ.Բ.-ն դեռեւս իր փեսան չէր: Ավելին, ինչ վերաբերում է 6-րդ հայտարարությանը, նշված ժամանակահատվածում Վ.Բ.-ն չի եղել մրցութային հանձնաժողովի կազմում, եւ եթե նույնիսկ այդպես լիներ, նա չէր կարող ազդել իր որոշման վրա: Ինչ վերաբերում է 8-րդ հայտարարությանը, Հ.Ա.-ն ընդունել է, որ մեկուսիչները

վերցվել են «Ղարս» մասնաճյուղից եւ ուղարկվել Արագած գյուղ, որտեղ կառուցվում էր փոքր հիդրոէլեկտրակայան, որի համահիմնադիրն էր ինքը, սակայն Վ.Բ.-ն այդ կայանի հետ որեւէ առնչություն չի ունեցել: Ինչ վերաբերում է «ՀԷՑ»-ի ֆինանսների եւ էկոնոմիկայի հարցերով տնօրինության կողմից «Սեկանս» ՍՊԸ-ի հաշվեհամարին սխալմամբ փոխանցված 4.978.099 ՀՀ դրամ գումարին, ապա վերջինս հայց է ներկայացրել ընդդեմ «Սեկանս» ՍՊԸ-ի, եւ 2009 թվականին դատարանը կայացրել է վերոնշյալ գումարի փոխհատուցման մասին որոշում: Այդ գումարը պետք է վերադարձվեր «ՀԷՑ»-ին, իսկ դրա չկատարումն արդյունքում հանգեցրել է «Սեկանս» ՍՊԸ-ի սնանկացմանը:

12. Ընդ որում, ներքին քննությամբ պարզվել է, որ դիմումատուի կողմից ներկայացված տեղեկատվությունը շուկայական գների վերաբերյալ սխալ է եղել: Ավելին, ինչ վերաբերում է 7-րդ հայտարարությանը, ապա «Ղարս» մասնաճյուղի տնօրենը դիմել է «ՀԷՑ»-ին՝ Գյումրիի երկհարկանի շենքը Ն.Պ.-ին վաճառելու պահանջով, քանի որ ոմն Մ.Մ.-ն հրաժարվել էր այն գնել, իսկ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը բավարարել էր վաճառքի մասին «ՀԷՑ»-ի պահանջը: Բացի այդ, ինչ վերաբերում է 11-րդ հայտարարությանը, «Սայգա» ՍՊԸ-ի տնօրենը «ՀԷՑ»-ի պաշտոնյային հայտնել է, որ «ՀԷՑ»-ին տրամադրված ծառայությունների համար գումարի չափը երբեք չի գերազանցել 100 միլիոն դրամը, ինչպես պնդել է դիմումատուն: Մատուցվել են մինչեւ 78 միլիոն ՀՀ դրամ գումարի չափով լրացուցիչ ծառայություններ:

13. «ՀԷՑ»-ի երկու այլ պաշտոնյաներ հերքել են 12-րդ հայտարարությունը՝ իրականությանը չհամապատասխանելու հիմքով: Նրանցից մեկը՝ «Գեղամա» մասնաճյուղի տնօրենը, պնդել է, որ դիմումատուի հաղորդման մեջ ներկայացված լուսանկարում պատկերված՝ ենթադրաբար գողացված էլեկտրաէներգիայի հաշվիչները եղել են ինդուկցիոն տիպի միաֆազ էլեկտրաէներգիայի հաշվիչներ, որոնք փոխարինվել են էլեկտրոնային հաշվիչներով: Մասնավորապես, վերազինման նպատակով «Գեղամա» մասնաճյուղի լաբորատորիա են հանձնվել մեծ թվով ինդուկցիոն տիպի միաֆազ էլեկտրաէներգիայի հաշվիչներ:

14. 2012 թվականի օգոստոսի 16-ին Վ.Բ.-ն վիրավորանքի եւ զրպարտության հիմքով դիմումատուի դեմ հարուցել է հայց՝ պահանջելով ներողություն խնդրել եւ վճարել փոխհատուցում:

15. 2013 թվականի հուլիսի 15-ին Շիրակի մարզի դատարանը (Մարզային դատարան) մերժել է Վ.Բ.-ի հայցը: Դատարանը վճռել է, որ դիմումատուի հայտարարությունները «հրապարակային» չեն եղել Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով (տե՛ս ստորել՝ 24 պարբերությունը), քանի որ դրանք ներկայացվել են խիստ գաղտնիության պայմաններում:

16. 2013 թվականի օգոստոսի 12-ին Վ.Բ.-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք:

17. 2013 թվականի նոյեմբերի 20-ին Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը բեկանել է 2013 թվականի հուլիսի 15-ի վճիռը եւ գործն ուղարկել նոր քննության այն հիմքով, որ Մարզային դատարանը սխալ է մեկնաբանել «հրապարակային հայտարարություն» հասկացությունը: Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի 2012 թվականին կայացրած որոշումներին (տես ստորել՝ 26 պարբերությունը)՝ այն վճռել է, որ «երրորդ անձ» եզրույթը նշանակում է հայցվոր կամ պատասխանող չհամարվող այն անձը, որին տրամադրվել է տեղեկությունը, մինչդեռ Մարզային դատարանը Յ.Մ.-ին չի դիտարկել որպես «երրորդ անձ»: 2014 թվականի հունվարի 15-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի կողմից այդ վճռի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ չի ընդունել:

18. 2015 թվականի մարտի 3-ին՝ վարույթի երկրորդ փուլի ընթացքում, Մարզային դատարանը մասամբ բավարարել է Վ.Բ.-ի հայցը: Այն վճռել է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով դիմումատուի հաղորդումը հրապարակային հայտարարություն է: Մասնավորապես նա իր հաղորդումը ներկայացրել է իր պայմանագիրը դադարելուց հինգ ամիս անց եւ իր հաղորդումը ներկայացնելով Յ.Մ.-ին՝ իր հայտարարությունը կատարել է

հրապարակայնորեն, այսինքն՝ զրպարտություն կատարող եւ զրպարտության ենթարկված անձանցից տարբեր՝ այլ անձի ներկայությամբ: Բացի այդ, նրա փաստարկները ստուգելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով, եւ այդ հանձնաժողովի անդամները նույնպես տեղեկացել են հաղորդման բովանդակության մասին: Հետեւաբար դիմումատուն իր հաղորդումը ներկայացրել է մեկ «երրորդ անձի»՝ Յ.Մ.-ի ներկայությամբ, եւ այդպիսով չի ձեռնարկել տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու համապատասխան միջոցներ, որ այն հասանելի չդառնա այլ անձանց: Այն նաեւ որպես ապացույց չի ընդունել ընկերության առցանց ներկայացված հայտարարությունը, քանի որ այն ներկայացվել է որպես էկրանապատկեր:

Այնուհետեւ Մարզային դատարանը հղում է կատարել ներքին քննության արդյունքներին, որով պարզվել է, որ դիմումատուի հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը (տե՛ս վերետւմ՝ 11-13 պարբերությունները): Այսպիսով, դատարանը գտել է, որ 1-ին հայտարարությունը վիրավորանք է, քանի որ այն փաստական հիմք չի ունեցել: Ինչ վերաբերում է մյուս հայտարարություններին (շեղատառերով), որոնք դիմումատուն չի հիմնավորել, ապա դրանք եղել են զրպարտչական, արժանապատվությունը նվաստացնող եւ Վ.Բ.-ի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորող հայտարարություններ: Մասնավորապես դիմումատուն չի ապացուցել, որ ձեռնարկել է բոլոր միջոցները իր հաղորդման գաղտնիությունն ապահովելու համար, որ իր գործողություններն ուղղված են եղել «ՀԷՑ»-ում կոռուպցիոն գործողությունները քննելուն, բացահայտելուն եւ կանխելուն, եւ որ նա մտադրություն չի ունեցել զրպարտել Վ.Բ.-ին: Մասնավորապես նա այլեւս չի աշխատել «ՀԷՑ»-ում, եւ այդ փաստերը ստուգելը նրա իրավասության շրջանակում չի եղել: Դիմումատուի փաստարկն այն մասին, որ մտադրություն չի ունեցել զրպարտել Վ.Բ.-ին, չի համապատասխանում իրականությանը, քանի որ նա չի կարողացել ապացուցել իր հայտարարությունների ճշմարտացիությունը:

Բոլոր դեպքերում, նույնիսկ եթե նա նման մտադրություն չի ունեցել, նա բարեխղճություն չի ցուցաբերել տրամադրված տեղեկությունների վերաբերյալ իր սուբյեկտիվ գնահատականը ներկայացնելու հարցում: Դատարանը նշել է սակայն, որ նրա հայտարարությունները չեն կարող համարվել սուբյեկտիվ գնահատական, քանի որ դրանք փաստական հիմք չեն ունեցել: Բացի այդ, նա չի ապացուցել, որ իր հայտարարությունները պայմանավորված են եղել գերակա հանրային շահով: Մասնավորապես հանրային շահ ներկայացնող ոլորտների կամ խնդիրների մասին տեղեկություններ տարածելու պարտականությունը դրվել է զանգվածային լրատվական միջոցների, այլ ոչ թե առանձին անհատի վրա:

Դիմումատուին պարտավորեցրել են հրապարակային ներողություն խնդրել «նույն եղանակով, որով [նա] հրապարակել է [վիճարկվող հայտարարությունները]» եւ վճարել 2.000.000 դրամ՝ որպես վիրավորանքի եւ զրպարտության փոխհատուցում: Բացի այդ, նրան պարտավորեցրել են վճարել դատական եւ այլ ծախսեր՝ 492.128 ՀՀ դրամի չափով:

19. 2015 թվականի մարտի 25-ին դիմումատուն ներկայացրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում ենթադրող բողոք՝ հիմնվելով, *inter alia* (ի թիվս այլնի), *Ջախարովն ընդդեմ Ռուսաստանի [Zakharov v. Russia]* (թիվ 14881/03, 2006 թվականի հոկտեմբերի 5) եւ *Կազակովն ընդդեմ Ռուսաստանի [Kazakov v. Russia]* (թիվ 1758/02, 2008 թվականի դեկտեմբերի 18) գործերի վրա: Մասնավորապես նա վիճարկել է, որ թեեւ իր հայտարարություններն արվել են հրապարակայնորեն, նա իր հաղորդումը ներկայացրել է իր անձնական էլեկտրոնային փոստի հասցեով եւ պահպանելով խիստ գաղտնիություն, ինչպես հավաստիացրել է ընկերությունը, մինչդեռ Մարզային դատարանը հաշվի չի առել այդ փաստը եւ մերժել է ընկերության առցանց հայտարարությունը՝ այն համարելով անընդունելի (տե՛ս վերելում՝ 18 պարբերությունը): Ավելին, այն հաշվի չի առել այն փաստը, որ նա իր հաղորդումը ներկայացրել է կոռուպցիոն գործողությունների մասին հայտնելու վերաբերյալ ընկերության պահանջին ի պատասխան: Նրա նպատակն էր բացահայտել եւ քննել այն, ինչը, նրա

կարծիքով, «ՀԷՑ»-ում եղել է կոռուպցիայի դրսևորում, եւ ներկայացրել է հանրային շահ: Նա հնարավորություն չի ունեցել ստուգելու իր հայտարարությունները՝ բացի դրանք հայցվորի ղեկավարության ուշադրությանը ներկայացնելուց: Ինչ վերաբերում է նրա առաջին հայտարարությանը, նա պարզապես հաղորդել է այն, ինչ տեսել է տեղական լրատվամիջոցներում: Այնուամենայնիվ, դատարանը մերժել է համապատասխան լրատվական հոդվածների տպագրված նյութերը, քանի որ դրանք բնօրինակ փաստաթղթեր չեն եղել: Բացի այդ, «ՀԷՑ»-ը հրաժարվել է Դատարանին տրամադրել իր հաղորդմանը կից ներկայացված երեք նիշքերը, որոնք եղել են «ՀԷՑ»-ի պաշտոնական փաստաթղթերի հիման վրա կատարված վերլուծություններ եւ կարող էին ապացուցել նրա պնդումների ճշմարտացիությունը: Մարզային դատարանն այդ ապացույցները «ՀԷՑ» -ից չի ստացել նաեւ դատական կարգադրիչների ծառայության միջոցով: Ավելին, իր հաղորդման մեջ բերված հայտարարությունները հիմնավորելու համար նա դիմել է Մարզային դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «ՀԷՑ»-ին ներկայացնել որոշակի ապացույցներ, սակայն Դատարանը նույնիսկ չի դիտարկել նրա պահանջը: Այդ կերպ նա զրկվել է պաշտպանությամբ հանդես գալու իր հնարավորությունից: Եվ վերջապես, նա պնդել է, որ Դատարանի կողմից իր նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցը անհամաչափ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ո՛չ ինքը, ո՛չ էլ իր կինը չեն ունեցել աշխատանք, եւ վնասը փոխհատուցելու միակ միջոցը եղել է նրանց բնակարանի վաճառքը:

20. 2015 թվականի հունիսի 19-ին Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը եւ անփոփոխ թողել Մարզային դատարանի վճիռը: Վերաքննիչ դատարանը, *inter alia*, վճռել է, որ այն փաստը, որ դիմումատուն իր հաղորդումը ներկայացրել է խիստ գաղտնիության պայմաններում եւ դրա համար պատասխանատու անձին, որեւէ ազդեցություն չի ունեցել գործի լուծման վրա, քանի որ այն ներկայացվել է «երրորդ անձին», մասնավորապես՝ Յ.Մ.-ին: Ավելին, դիմումատուն իր հաղորդումը ներկայացնելիս

չի նշել իր տեղեկատվության աղբյուրը՝ պնդելով, որ հայտնել է այն, ինչի մասին տեղեկացել է լուրերով, եւ որ որեւէ ապացույց չի ներկայացվել իր հայտարարությունները հիմնավորելու համար: Ինչ վերաբերում է փոխհատուցման չափին, ապա Դատարանը այն համարել է արդարացի եւ դիմումատուի համար ֆինանսապես ոչ ծանր:

21. 2015 թվականի հուլիսի 20-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը 2015 թվականի օգոստոսի 19-ին Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չի ընդունվել: Այդ որոշման օրինակը նրան է հանձնվել 2015 թվականի սեպտեմբերի 4-ին:

22. 2016 թվականի օգոստոսի 29-ին Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (ԴԱՀԿ) աշխատակիցը որոշում է կայացրել առգրավել դիմումատուի ավտոմեքենան: Մարզային դատարանի կողմից դիմումատուի նկատմամբ նշանակված վնասի չափը փոխհատուցելու համար ԴԱՀԿ-ի համապատասխան աշխատակիցները համապատասխանաբար՝ 2017 թվականի փետրվարի 16-ին եւ 2018 թվականի հոկտեմբերի 16-ին որոշում են կայացրել հրապարակային աճուրդով վաճառել դիմումատուի մեքենան եւ բնակարանը: Ավտոմեքենայի գնահատված արժեքը կազմել է 1.340.000 ՀՀ դրամ, իսկ մեկնարկային գինը սահմանվել է 1.005.000 ՀՀ դրամ: Ինչ վերաբերում է բնակարանին, ապա դրա գնահատված արժեքը կազմել է 5.000.000 ՀՀ դրամ, իսկ մեկնարկային գինը սահմանվել է 3.750.000 ՀՀ դրամ:

Որեւէ տեղեկություն չի տրամադրվել այն մասին, թե արդյոք ԴԱՀԿ-ն վաճառել է դիմումատուի մեքենան եւ բնակարանը:

23. Դիմումատուն պնդել է, որ «ՀԷՑ»-ի ենթադրյալ կոռուպցիոն գործողությունները հանգեցրել են էլեկտրաէներգիայի գների բարձրացմանը 2015 թվականին, ինչը զանգվածային բողոքի ակցիաներ է առաջացրել Հայաստանի մայրաքաղաքում: Կառավարությունը չի վիճարկել այդ պնդումները:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

I. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ա. Քաղաքացիական օրենսգիրք (1999 թվական, տվյալ ժամանակահատվածում գործող)

24. Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսվում է, որ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ: Վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային հայտարարությունն է: Հրապարակային հայտարարությունը կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ հետապնդում է գերակա հանրային շահ: Զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստական տվյալներ հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստական տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաեւ այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային

որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, եւ դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (այլ կերպ ասած՝ հեղինակին):

Բ. «Ազդարարման համակարգի մասին» օրենք (2017 թվականից գործող Ազդարարման մասին օրենք)

25. 2-րդ հոդվածի 1-ի մասի 1-ի կետը ազդարարումը սահմանում է որպես «ազդարարի կողմից պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական հիմնարկներում եւ կազմակերպություններում, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ եկամուտների հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրա սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում Օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին»: 2-րդ հոդվածի 1-ի մասի 2-ի կետը ազդարարին սահմանում է որպես «ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը Օրենքով նախատեսված կարգով բարեխիղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ եկամուտների հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրա սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի կամ հաստատության կամ կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որի հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ ծառայողական հարաբերությունների մեջ կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար»:

Գ. Վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումները (թիվ ԼԴ/0749/02/10 եւ ԵԿԴ/2293/02/10)

26. Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումներում Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում պարունակվող «հրապարակային հայտարարություն» եզրույթը մեկնաբանվել է որպես հայտարարություն, որ արվել է առնվազն մեկ «երրորդ անձի» ներկայությամբ: Այն մասնավորապես սահմանում է, որ հրապարակային հայտարարությունը կամ հրապարակայնորեն հայտնելը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով, համացանցի միջոցով կամ հեռահաղորդակցության այլ միջոցներով տարածմամբ, հրապարակային ելույթներով կամ «որեւէ այլ կերպ» նույնիսկ մեկ «երրորդ անձի» դրանք հաղորդակից դարձնելով: Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց:

Մեկնաբանվող հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային (անձը վիրավորել է տուժողին՝ առանց երրորդ անձանց ներկայության):

II. Միջազգային եՎ եվրոպական իրավական ԴԱՇՏը

27. Համապատասխան միջազգային եւ եվրոպական իրավունքը մեջբերված է Հալեթն ընդդեմ Լյուքսեմբուրգի [Halet v. Luxembourg] գործում ([ՄԴ] [GC], թիվ 21884/18, §§ 54-58, 2023 թվականի փետրվարի 14):

28. ՄԱԿ-ի՝ կարծիքն ազատ արտահայտելու եւ ազատ արտահայտվելու իրավունքի խթանման եւ պաշտպանության հարցերով հատուկ զեկուցողն իր 2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ Ա/70/361 զեկույցում անդրադարձել է տեղեկատվության աղբյուրների եւ ազդարարների պաշտպանությանը: Նրա

փաստարկի համաձայն՝ «այն ազդարարները, որոնք, ելնելով ողջամիտ հիմքերից, հաղորդում են տեղեկություն, որը պարզվում է, որ ճիշտ չէ, այնուամենայնիվ, պետք է պաշտպանված լինեն վրեժխնդրությունից»:

29. 2014 թվականի ապրիլի 30-ին Նախարարների կոմիտեն ընդունել է Ազդարարների պաշտպանության մասին CM/Rec(2014)7 հանձնարարականը, որում ասվում է հետևյալը:

«...

Ընդունելով, որ այն անձինք, որոնք հաղորդում կամ տարածում են հանրային շահերի հետ կապված սպառնալիքների կամ վնասի մասին տեղեկություններ (ազդարարներ), կարող են նպաստել թափանցիկության եւ ժողովրդավարական հաշվետվողականության ամրապնդմանը:

...

Սույն հանձնարարականի եւ դրա սկզբունքների նպատակներով՝

... «ազդարար» նշանակում է «ցանկացած անձ, որը հաղորդում կամ տարածում է տեղեկություններ հանրային շահին սպառնացող վտանգի կամ վնասի մասին՝ իր աշխատանքային հարաբերությունների համատեքստում, լինի դա պետական, թե մասնավոր ոլորտում»:

...

II. Անհատական շրջանակը

3. Ազգային իրավական դաշտի անհատական շրջանակը պետք է ներառի բոլոր այն անձանց, որոնք աշխատում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում՝ անկախ նրանց աշխատանքային հարաբերությունների բնույթից եւ այն հանգամանքից՝ արդյոք նրանք վարձատրվում են, թե՛ ոչ:

4. Ազգային իրավական դաշտը պետք է ներառի նաեւ այն անձանց, որոնց աշխատանքային հարաբերություններն ավարտվել են եւ հնարավոր է՝ դեռ չեն սկսվել այն դեպքերում, երբ հանրային շահերին ուղղված սպառնալիքի կամ վնասի մասին տեղեկությունները ձեռք են բերվել աշխատանքի ընդունվելու ընթացքում կամ նախապայմանագրային բանակցությունների մեկ այլ փուլում:

...

21. Ազդարարները պետք է պաշտպանված լինեն իրենց գործատուի եւ գործատուի մոտ աշխատող կամ նրա անունից գործող անձանց կողմից վրեժխնդրության բոլոր ձեւերից, լինի դա ուղղակի կամ անուղղակի: Նման վրեժխնդրության ձեւերը կարող են ներառել աշխատանքից ազատումը, աշխատանքային պարտականությունների ժամանակավոր դադարեցումը, պաշտոնի իջեցումը, առաջխաղացման հնարավորությունների կորուստը, պատժիչ նպատակներով տեղափոխությունը եւ աշխատավարձի կրճատումը կամ պահումները, ոտնձգությունները կամ այլ պատժիչ կամ խտրական վերաբերմունք:

22. Պաշտպանության հնարավորությունը չպետք է կորսվի միայն այն հիմքով, որ հաղորդում կատարած կամ տեղեկություն տարածած անձը սխալվել է այդ տեղեկության կարելիության առնչությամբ, կամ որ հանրային շահերին ուղղված ենթադրյալ սպառնալիքը չի իրագործվել՝ պայմանով, որ նա ողջամիտ հիմքեր է ունեցել հավատալու դրա արժանահավատությանը:

...»:

Հանձնարարականի բացատրական հուշագրում ասվում է՝

«...

31. Ազդարարի դե ֆակտո աշխատանքային հարաբերությունը եւ ոչ թե նրա հատուկ իրավական կարգավիճակն (օրինակ՝ աշխատող) է, որ անհատին տալիս է արտոնյալ հասանելիություն հանրային շահերին սպառնալու կամ վնաս հասցնելու վերաբերյալ տեղեկություններին: Ավելին, տարբեր անդամ պետություններում զբաղվածություն ունեցող կամ աշխատող անձանց իրավական նկարագրությունը, ինչպես նաեւ դրանից բխող նրանց իրավունքները եւ պարտավորությունները կարող են լինել տարբեր: Բացի այդ, նախընտրելի է համարվել խրախուսել անդամ պետություններին որդեգրելու ավելի լայն մոտեցում հանձնարարականի անհատական շրջանակի նկատմամբ: Այդ պատճառով որոշվել է անհատական շրջանակը նկարագրել՝ հղում կատարելով անձի «աշխատանքային հարաբերություններին»...

...

Հավելված. 29 սկզբունքները

...

Սկզբունք 22

85. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդիկ իրենց մտահոգությունները բարձրաձայնում են ոչ միայն այն ժամանակ, երբ հանցագործությունն արդեն կատարվել է, եւ վնասն արդեն հասցվել է, այլ առավել հաճախ՝ հետագա վնասը եւ վտանգը կանխելու համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ անձը կարող է հիմքեր ունենալ ենթադրելու, որ առկա է այնպիսի խնդիր, որը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ, հազվադեպ է պատահում, որն նա կարող է տիրապետել ամբողջական պատկերին: Հետեւաբար անխուսափելի է, որ երկու իրավիճակներում էլ հաղորդման կամ տարածման հետագա քննությունը կարող է ցույց տալ, որ ազդարարը սխալվել է: 22-րդ սկզբունքը հստակ սահմանում է, որ տվյալ անձն այդ հանգամանքներում չպետք է կորցնի պաշտպանության հնարավորությունը: Ընդ որում, այս սկզբունքը ձեակերպվել է այնպես, որ բացառում է ազդարարի կողմից հաղորդում ներկայացնելու կամ տարածելու դրդապատճառի կամ դա անելու բարի կամքի դրսեւորման կապը ազդարարի պաշտպանության ապահովման խնդրի հետ: 10-րդ սկզբունքով պաշտպանվում է յուրաքանչյուրի դիրքորոշումը, ով կորուստ կամ վնաս է կրել որեւէ անձի կողմից դիտավորյալ եւ մտածված կեղծ տեղեկություններ հաղորդելու կամ տարածելու հետեւանքով: Բացի այդ, նման հաղորդումներ ներկայացնող կամ տարածող անձը չպետք է պաշտպանված լինի օրենքով:

...»:

30. Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի՝ ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության մասին 2019/1937/ԵՄ հրահանգը անդամ պետությունների համար սահմանել է պահանջ մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 17-ն ընդունել հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կարգավորումները եւ վարչաիրավական դրույթները:

Հրահանգի՝ անհատական շրջանակը սահմանող դրույթները շարադրվել են հետեւյալ կերպ.

Հոդված 4

Անհատական շրջանակը

«1. Սույն Հրահանգը կիրառվում է պետական կամ մասնավոր հատվածում աշխատող՝ հաղորդում ներկայացնող անձանց նկատմամբ, որոնք ստացել են աշխատանքի հետ կապված խախտումների մասին տեղեկություններ. այդ շրջանակը ներառում է առնվազն հետևյալ անձանց.

ա) Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 45(1) հոդվածի իմաստով աշխատողի կարգավիճակ ունեցող անձինք, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողները.

բ) Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 49 հոդվածի իմաստով ինքնազբաղվածի կարգավիճակ ունեցող անձինք.

գ) ձեռնարկության բաժնետերեր եւ վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմնում պաշտոն զբաղեցնող անձինք, ներառյալ՝ ոչ գործադիր անդամները, ինչպես նաեւ կամավորներն ու վճարովի կամ չվճարվող հիմունքներով վերապատրաստում անցնող անձինք.

դ) կապալառուների, ենթակապալառուների եւ մատակարարների հսկողության եւ ղեկավարության ներքո աշխատող ցանկացած անձ:

2. Սույն Հրահանգը կիրառվում է նաեւ հաղորդում ներկայացնող անձանց նկատմամբ, որոնք հաղորդում կամ հրապարակայնորեն տարածում են այնպիսի աշխատանքային հարաբերությունների հետ կապված խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնք արդեն ավարտվել են:

3. Սույն Հրահանգը կիրառվում է նաեւ հաղորդում ներկայացնող անձանց նկատմամբ, որոնց աշխատանքային բնույթի հարաբերությունները դեռ չեն սկսվել այն դեպքերում, երբ խախտումների մասին տեղեկությունները ստացվել են աշխատանքի ընդունման գործընթացում կամ այլ նախապայմանագրային բանակցությունների ընթացքում»:

ՕՐԵՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

31. Դիմումատուն բողոք է ներկայացրել այն մասին, որ վիրավորանքի եւ զրպարտության առնչությամբ իր դեմ կայացված դատարանի վճիռը խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված տեղեկություններ տրամադրելու իր իրավունքը: Նա նաեւ հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա, երբ պնդել է, որ խախտվել են պաշտպանության իր իրավունքները, երբ ներպետական դատարանների կողմից մերժվել է «ՀԷՑ»-ի տրամադրության տակ եղած այն ապացույցները ներկայացնելու՝ «ՀԷՑ»-ին պարտավորեցնող պահանջը, որոնք դիմումատուն համարել է անհրաժեշտ Վ. Բ.-ի վերաբերյալ իր պնդումները հիմնավորելու համար:

32. Դատարանը, հանդես գալով որպես գործի փաստերն օրենքի ուժով որակող մասնագիտացված կառույց (տե՛ս Ռոդամիլյան եւ այլք ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ] [Radomilja and Others v. Croatia [GC]], թիվ 37685/10 եւ 22768/12, §§ 114, 124 եւ 126, 2018 թվականի մարտի 20), համարում է, որ վերոնշյալ բողոքները պետք է քննել միայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն, որը շարադրված է հետեւյալ բովանդակությամբ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից...

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւական պահանջներով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատասխանատվության միջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները

պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկության տարածումը կանխելու կամ դատական իշխանության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Ա. Ընդունելիությունը

33. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտորեն անհիմն է, ո՛չ էլ անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուն

34. Դիմումատուն նշել է, որ համապատասխան տեղեկություններն իրեն հայտնի են դարձել «ՀԷՑ»-ում որպես Անվտանգության եւ վարչական հարցերի դեպարտամենտի պետ աշխատելու ընթացքում, եւ որ նա հաղորդում է ներկայացրել այդ մասին ընկերությանը՝ Վ.Բ.-ի ենթադրյալ կոռուպցիոն գործունեության մասին զգուշացնելու համար: Հետեւաբար նա պետք է օգտվի ազդարարների համար նախատեսված պաշտպանությունից՝ չնայած այն հանգամանքին, որ հաղորդումը ներկայացնելու պահին նա այլեւս «ՀԷՑ»-ի աշխատակից չէր (դիմումատուն հղում է կատարել Դատարանի նախադեպային իրավունքին եւ վերելում՝ 29 պարբերության մեջ նշված՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Ազդարարների պաշտպանության մասին» CM/Rec(2014)7 հանձնարարականին):

35. Նա պնդել է, որ ազատ արտահայտվելու իր իրավունքին միջամտելը նախատեսված չէ օրենքով, քանի որ վերջինիս կողմից ներկայացված

հաղորդումը չի համապատասխանում Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում նշված «հրապարակային» համարվելու պահանջին, ինչպես մեկնաբանվել է Վճռաբեկ դատարանի կողմից (վերետում՝ 24 եւ 26 պարբերություններ): Այդուհանդերձ, ներպետական դատարաններն այդ եզրույթը մեկնաբանել են լայն իմաստով՝ այն տարածելով ցանկացած հայտարարության վրա, որը հայտնի է դարձել երրորդ կողմին: Երբ նա արձագանքել է կոռուպցիոն գործունեության կամ Ընկերությանը վնաս հասցնող ցանկացած այլ գործողության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու մասին Ընկերության կոչին, նա չէր կարող կանխատեսել, որ հետագայում իրեն կհետապնդեն մասնավոր նամակագրության մեջ պարունակվող տեղեկությունների տարածման համար, որի գաղտնիությունը Ընկերությունը խոստացել էր պահպանել: Հետագայում Յ.Մ.-ի պահանջով նա ստորագրել է հաղորդումը եւ դա արել է միայն նրա ներկայությամբ: Հետեւաբար ներպետական դատարանները գտել են, որ նրա կողմից երբեք «հրապարակայնորեն» որեւէ հայտարարություն չի արվել: Ակնհայտ է եղել, որ նրա հաղորդումը պետք է ուղարկվեր քննության, քանի որ դա էր Ընկերության կողմից սահմանված ընթացակարգի նպատակը: Նա երբեւէ հրապարակայնորեն հանդես չի եկել, փոխարենը ընտրել է հաղորդում ներկայացնելու ամենաքիչ վնասակար եղանակը, որը ենթադրվում էր, որ գաղտնի է: Ներպետական դատարանները պատշաճ կերպով հաշվի չեն առել տրամադրվող տեղեկությունների հանրային շահ ներկայացնելու բնույթը եւ գործը դիտարկել են որպես սովորական գրպարտության դեպք՝ այդ ժամանակ ազդարարների պաշտպանության համար իրավական դաշտի բացակայության պատճառով, ինչն ինքնին խնդրահարույց է եղել 10-րդ հոդվածի համաձայն: Նրանք չեն հաստատել արդարացի հավասարակշռություն վտանգված մրցակցային շահերի միջեւ: Եվ վերջապես, վնասի չափը, որը նրանից պահանջվել է վճարել, եղել է չափազանցված, արդյունքում ԴԱՀԿ-ն նրանից առգրավել է միակ բնակարանը եւ մեքենան՝ հրապարակային աճուրդում վաճառելու համար:

բ) Կառավարությունը

36. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի կարող հիմնվել ազդարարների համար նախատեսված պաշտպանության վրա, որը ներպետական օրենսդրության մեջ ներառվել է միայն 2017 թվականին՝ ելնելով մասնավորապես սույն գործի հանգամանքներից: Ավելին, վիճարկվող հայտարարություններն անելու պահին նա այլևս «ՀԷՑ»-ի աշխատակից չէր, եւ հետեւաբար նրա գործը տարբերվել է ազդարարներին վերաբերող՝ դատարանի նախադեպային իրավունքի գործերից:

Բոլոր դեպքերում դիմումատուի ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելը «սահմանված» է եղել օրենքով, քանի որ «հրապարակային հայտարարություն» եզրույթը վերաբերել է զրպարտություն կատարած եւ զրպարտության ենթարկված անձանցից տարբեր երրորդ անձի ներկայությամբ արված ցանկացած հայտարարության: 2012 թվականի հուլիսի 11-ին իր հաղորդումը Յ.Մ.-ին փոխանցելուց հետո նա այլևս չէր կարող ակնկալել, որ իր նամակագրությունը կմնա գաղտնի, քանի որ այն փոխանցվելու էր Ընկերության մյուս աշխատակիցներին, որոնք պատասխանատու են եղել իր պնդումները քննելու համար: Բացի այդ, տեղեկությունները վերաբերել են Վ. Բ.-ին, եւ նրան մեղադրել են հանցավոր վարքագծի դրսեւորման մեջ, ինչն ընկերությունը մանրամասն ուսումնասիրել է եւ հերքել՝ դրանք համարելով չհիմնավորված: Ըստ դիմումատուի պնդումների՝ դրանք վերաբերել են ոչ թե «ՀԷՑ»-ին, այլ միայն Վ.Բ.-ին, եւ պայմանավորված են եղել անձնական թշնամանքով, այլ ոչ թե հանրային շահով: Իրականում դիմումատուն չի ներկայացրել որեւէ ապացույց իր հայտարարությունների ճշմարտացիությունը հիմնավորելու համար, թեւ նրա կողմից առաջադրված մեղադրանքները կրել են լուրջ բնույթ եւ կարող էին նույնիսկ հանգեցնել Վ. Բ.-ի նկատմամբ քրեական հետապնդման: Եվ վերջապես, այդ հանգամանքներում նրա նկատմամբ փոխհատուցման մեծ գումար սահմանելը եղել է անհրաժեշտ՝ հաշվի առնելով գործընկերների աչքերում Վ. Բ.-ի պատիվն ու հեղինակությունն արատավորող իր պնդումների լրջությունը:

2. *Դատարանի գնահատականը*

37. Կողմերի միջև առկա է համընդհանուր կարծիք, որ դիմումատուի նկատմամբ կայացված քաղաքացիական դատարանների վճիռները «պետական մարմինների կողմից միջամտություն» են նրա ազատ արտահայտվելու իրավունքին: Հետևաբար պետք է որոշել՝ արդյոք այդ միջամտությունը եղել է «օրենքով սահմանված», արդյոք հետապնդել է 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակներ, եւ արդյոք այդ նպատակներն իրագործելու համար դրանք անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս Բրչկո իսլամական համայնքի մեջլիսը եւ այլք ընդդեմ Բոսնիա եւ Հերցեգովինայի [ՄՊ] [Medžlis Islamske Zajednice Brčko and Others v. Bosnia and Herzegovina [GC]], թիվ 17224/11, § 67, 2017 թվականի հունիսի 27 եւ Գասպարին ընդդեմ Հայաստանի [Gaspari v. Armenia], (թիվ 2) , թիվ 67783/13, § 21, 2023 թվականի հուլիսի 11):

ա) Արդյո՞ք միջամտությունը եղել է օրենքով սահմանված

38. Դատարանը նշել է, որ ներպետական դատարաններն իրենց որոշումները կայացնելիս հիմնվել են Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի վրա (տե՛ս վերելում՝ 18, 20 եւ 24 պարբերությունները): Համապատասխանաբար, քննարկվող միջամտությունն ունեցել է իրավական հիմք: Կողմերը չեն համաձայնել այն հարցի շուրջ՝ արդյոք այն եղել է բավականաչափ հստակ, որպեսզի դիմումատուն այդ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսի, որ գաղտնի ընթացակարգով անձնական նամակագրությամբ արված իր հայտարարություններն այդ դրույթի իմաստով կդիտարկվեն որպես «հրապարակային»: Դատարանն այդ ասպեկտին կանդրադառնա ներպետական դատարանների կողմից բերված պատճառաբանությունների համատեքստում՝ բողոքարկվող միջամտությունը հիմնավորելու վերաբերյալ (տես ստորեւ՝ 51-53 պարբերությունները):

բ) Արդյո՞ք միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ

39. Վիճարկվող միջամտությունը կարող է դիտարկվել որպես այլ անձանց, մասնավորապես Վ. Բ.-ի, որը տվյալ պահին եղել է «ՀԷՑ-ի» անվտանգության եւ վերահսկողության փոխտնօրեն, «հեղինակությունը կամ իրավունքները» պաշտպանելու իրավաչափ նպատակ:

գ) Արդյո՞ք միջամտությունն «անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում»

ի) Ընդհանուր սկզբունքները

40. Ազատ արտահայտվելու իրավունքի իրացմանը միջամտելու անհրաժեշտության գնահատման ընդհանուր սկզբունքներն ամփոփ ներկայացված են Բեդատն ընդդեմ Շվեյցարիայի գործում [Bédat v. Switzerland ([GC]] [ՄՊ], թիվ 56925/08, § 48, 2016 թվականի մարտի 29), իսկ վերջերս՝ Հալեթի գործում (վերելում հիշատակված, § 110):

41. Սույն դեպքին համանման դեպքերում, երբ «այլ անձանց հեղինակության կամ իրավունքների պաշտպանության» շահերի մասով կիրառվում է Ց-րդ հոդվածը, Դատարանից կարող է պահանջվել ստուգելու, թե արդյոք ներպետական մարմինները հաստատել են արդարացի հավասարակշռություն Կոնվենցիայով երաշխավորված երկու արժեքները, այն է՝ մի կողմից՝ արտահայտվելու ազատությունը (որը պաշտպանվում է 10-րդ հոդվածով) եւ մյուս կողմից՝ Ց-րդ հոդվածով ամրագրված անձնական կյանքը հարգելու իրավունքը, պաշտպանելիս: Այս իրավունքների հավասարակշռության ապահովման համար կիրառվող ընդհանուր սկզբունքները, ինչպես նաեւ համապատասխան մոտեցումն ամփոփ ներկայացված են Բրչկո իսլամական համայնքի մեջլիսը եւ այլք [Medžlis Islamske Zajednice Brčko and Others] գործում (վերելում հիշատակված, §§ 77 եւ 78):

ii) *Սույն գործով ընդունվելիք մոտեցումը*

- 1) Արդյո՞ք 10-րդ հոդվածով նախատեսված իրավունքի եւ 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքի միջեւ պետք է ապահովվի հավասարակշռություն

42. Դիմումատուի կողմից Վ. Բ.-ին առաջադրված մեղադրանքները եղել են բավական լուրջ եւ հետեւաբար հասել են լրջության այնպիսի մակարդակի, որով հնարավոր է եղել վնաս հասցնել Վ. Բ.-ի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին (համեմատել Ուայթն ընդդեմ Շվեդիայի [White v. Sweden] գործը, թիվ 42435/02, § 25, 2006 թվականի սեպտեմբերի 19, Պֆայֆերն ընդդեմ Ավստրիայի [Pfeifer v. Austria] գործը, թիվ 12556/03, §§ 47-48, 2007 թվականի նոյեմբերի 15 եւ Ա.-ն ընդդեմ Նորվեգիայի [A. v. Norway], թիվ 28070/06, § 73, 2009 թվականի ապրիլի 9): Հետեւաբար Դատարանը պետք է պարզի՝ արդյոք ներպետական մարմինները հաստատել են արդարացի հավասարակշռություն Կոնվենցիայով երաշխավորված երկու արժեքների միջեւ, այն է՝ մի կողմից՝ դիմումատուի՝ 10-րդ հոդվածով պաշտպանվող արտահայտվելու ազատության եւ մյուս կողմից՝ Վ. Բ.-ի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իր հեղինակությունը հարգելու իրավունքի միջեւ (տե՛ս Աքսել Սպրինգեր ԱԳ-ն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [Axel Springer AG v. Germany] [GC], թիվ 39954/08, § 84, 2012 թվականի փետրվարի 7):

43. Եթե ներպետական մարմինները գործադրել են այդ իրավունքների միջեւ հավասարակշռություն հաստատելու ջանքեր, Դատարանը պետք է քննի, թե արդյոք նրանք իրենց գնահատման ժամանակ կիրառել են հարցի վերաբերյալ դրա նախադեպային իրավունքով սահմանված չափանիշները, եւ արդյոք այն հիմքերը, որոնք նրանց հանգեցրել են վիճարկվող որոշումները կայացնելուն, եղել են բավարար եւ համապատասխան, որպեսզի հիմնավորեն միջամտությունն ազատ արտահայտվելու իրավունքին (տե՛ս Սիկադն ընդդեմ Շվեյցարիայի [Cicad V. Switzerland], թիվ 17676/09, § 52, 2016 թվականի հունիսի 7): Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ի սկզբանե պարզել, թե արդյոք դիմումատուի

հաղորդումը, ինչպես նա պնդել է, կարող է դիտարկվել որպես ազդարարում՝ դրա նախադեպային իրավունքի իմաստով:

- 2) Ազդարարների համար նախատեսված պաշտպանության առնչությամբ Դատարանի նախադեպային իրավունքի վերաբերելիությունը

44. Դատարանը վերահաստատել է, որ ազդարարների ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանության ռեժիմը սովորաբար կիրառվում է այն դեպքերում, երբ համապատասխան աշխատողը կամ քաղաքացիական ծառայողն այն միակ անձն է կամ անձանց փոքր խմբի մասնիկը, որը տեղյակ է այն մասին, թե ինչ է տեղի ունենում աշխատավայրում, եւ այդպիսով ունի լավագույն հնարավորությունները՝ գործելու ի նպաստ հանրային շահերի՝ դրանց մասին տեղեկացնելով գործատուին կամ լայն հասարակությանը (տե՛ս Գուջան ընդդեմ Մոլդովայի [Guja v. Moldova], թիվ 14277/04, § 72, ՄԻԵԴ 2008): Այդուհանդերձ, աշխատողները պարտավոր են հավատարմություն, զսպվածություն եւ հայեցողություն ցուցաբերել իրենց գործատուի նկատմամբ, ինչը նշանակում է, որ արդար հավասարակշռություն փնտրելիս պետք է հաշվի առնել ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները եւ աշխատանքային պայմանագրերին եւ մասնագիտական միջավայրին բնորոշ փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները (տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործը, § 116):

45. Մինչ այժմ դատարանի կողմից քննված ազդարարման մասին գործերը վերաբերել են աշխատողի կողմից աշխատանքային հարաբերությունների ընթացքում ստացված ներքին տեղեկություններն արտաքին մարմնին կամ լայն հասարակությանը տրամադրելուն (տե՛ս նույն տեղում, վերելում հիշատակված Գուչայի գործը, § 72, Մարչենկոն ընդդեմ Ուկրաինայի գործը [Marchenko v. Ukraine], թիվ 4063/04, 2009 թվականի փետրվարի 19, Հեյնիշն ընդդեմ

Գերմանիայի գործը [Heinisch v. Germany], թիվ 28274/08, ՄԻԵԴ 2011 (քաղվածքներ), Բուկուրը եւ Տոման ընդդեմ Ռումինիայի գործը [Bucur and Toma v. Romania], թիվ 40238/02, 2013 թվականի հունվարի 8, Մաթյուզն ընդդեմ Հունգարիայի գործը [Matúz v. Hungary], թիվ 73571/10, 2014 թվականի հոկտեմբերի 21, եւ Գավլիկն ընդդեմ Լիխտենշտեյնի գործը [Gawlik v. Liechtenstein], թիվ 23922/19, 2021 թվականի փետրվարի 16): Հալեթի գործով Դատարանը վճռել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ազդարարների համար նախատեսված պաշտպանության դեպքում պետք է հիմնվել աշխատանքային հարաբերություններին բնորոշ առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտության վրա՝ մի կողմից՝ ենթակայության հարաբերություններին բնորոշ ակնկալվող հավատարմություն, զսպվածություն եւ շրջահայացություն ցուցաբերելու պարտականությունը եւ անհրաժեշտության դեպքում՝ օրենքով սահմանված գաղտնիության պահպանման պարտականությունը, իսկ մյուս կողմից՝ նրանց տնտեսական խոցելիությունն այն անձի, պետական հաստատության կամ ձեռնարկության նկատմամբ, որից կախված է նրանց աշխատանքը, եւ վերջիններիս կողմից վրեժխնդրության ենթարկվելու ռիսկը (տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործը, § 119):

46. Ի հակադրություն դրա՝ սույն գործով Դատարանին առաջարկվել է որոշում կայացնել ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանության ռեժիմի՝ այնպիսի իրավիճակում կիրառելիության հարցի վերաբերյալ, երբ աշխատավայրում հանրային շահին ենթադրաբար սպառնալիք կամ վնաս պատճառող գործողությունների եւ անգործության մասին տեղեկությունների հաղորդումը ներկայացվել է աշխատանքային հարաբերությունները դադարելուց հետո: Ավելին, սույն գործի առանձնահատկությունը նաեւ այն փաստն է, որ դիմումատուն երբեք հրապարակային չի արտահայտվել, փոխարենը, հետեւելով ընկերությունում կոռուպցիոն բնույթի գործունեության մասին տեղեկություններ հաղորդելու վերաբերյալ իր նախկին աշխատավայրի ղեկավարության հորդորին՝ օգտվել է

հաղորդում ներկայացնելու միայն ներքին ուղիներից (տե՛ս վերելում՝ 6 եւ 7 պարբերությունները): Հետեւաբար Դատարանը պետք է հաշվի առնի սույն գործի հատուկ հանգամանքները, որոնք տարբերում են վերելում՝ 45 պարբերության մեջ նշված նախադեպային իրավունքից:

Այս համատեքստում Դատարանը նկատում է, որ Եվրոպայում ներկայումս կիրառվող մոտեցումն այն է, որ աշխատանքից հեռանալը խոչընդոտ չէ ազդարարների պաշտպանության համար: Եվ իսկապես, ինչպես Նախարարների կոմիտեի CM/Rec(2014)7 հանձնարարականը (Սկզբունք 4, տե՛ս վերելում՝ 29 պարբերությունը), այնպես էլ 2019/1937/ԵՄ հրահանգը (Հոդված 4, տե՛ս վերելում՝ 30-րդ պարբերությունը), որոնցից վերջինս Հայաստանի համար պարտադիր չէ, քանի որ այն ԵՄ անդամ պետություն չէ, նախատեսում են ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանություն նաեւ նախկին աշխատակիցների համար: Նմանատիպ մոտեցում է կիրառվել Ազդարարների մասին օրենքում, որը սույն գործից հետո ներդրվել է ներպետական օրենսդրության մեջ (տե՛ս վերելում՝ 25 պարբերությունը): Վերոնշյալ հանձնարարականի բացատրական հուշագրում (31-րդ պարբերություն) նշվում է, որ հանրային շահերին սպառնացող կամ վնաս հասցնող տեղեկություններին անհատը հասանելիություն է ստանում ազդարարի դե ֆակտո աշխատանքային հարաբերության եւ ոչ թե նրա հատուկ իրավական կարգավիճակի (օրինակ՝ աշխատակից լինելու կարգավիճակը) ուժով:

Հաշվի առնելով վերոնշյալ 45 պարբերության մեջ նկարագրված իր մոտեցումը՝ Դատարանը համարում է, որ սույն գործի հանգամանքներում, երբ ծառայողական իրավախախտման մասին հաղորդումը ներկայացվում է աշխատանքից ազատվելուց հետո, ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանության ռեժիմը չպետք է ավտոմատ կերպով դադարի կիրառվել միայն այն պատճառով, որ աշխատանքային հարաբերություններն ավարտվել են: Իրականում այդ պաշտպանությունը սկզբունքորեն կարող է կիրառվել, եթե հանրային շահ ներկայացնող տեղեկությունը ստացվել է այն

ժամանակ, երբ, ելնելով իր աշխատանքային հարաբերություններից՝ «ազդարարն» ունեցել է արտոնյալ հասանելիություն այդ տեղեկությանը: Այն դեպքերում, երբ աշխատանքային հարաբերությունները դադարում են, աշխատավայրում բացասական հետեւանքներ կրելու հարց չի կարող առաջանալ, սակայն նախկին աշխատողի նկատմամբ վրեժխնդրությունը կարող է ունենալ այլ դրսեւորումներ: Կարելի է այն է, թե արդյոք նախկին աշխատակցին պատճառված վնասը եղել է գաղտնի տեղեկությունը բացահայտելու անմիջական հետեւանք:

47. Ի տարբերություն վերեւի 45 պարբերության մեջ նկարագրված դեպքերի՝ սույն գործով դիմումատուն իր հաղորդումը ներկայացրել է այն ժամանակ, երբ այլեւս «ՀԵՑ»-ի աշխատակից չէր: Նրա համար աշխատանքի ընթացքում բացասական հետեւանքներ չեն առաջացել, քանի որ նրա աշխատանքային հարաբերությունները դադարած են եղել: Այնուամենայնիվ, նրա հաղորդումը հիմնականում հիմնված է եղել այն տեղեկության վրա, որը նա ստացել է «ՀԵՑ»-ում աշխատելու ընթացքում: 1-ին հայտարարությունից բացի, որի աղբյուրը եղել են տեղական լրատվամիջոցները եւ խորհրդարանի նախկին պատգամավորի հայտարարությունը, դիմումատուն Վ. Բ.-ի կողմից ոչ իրավաչափ վարքագծի կոնկրետ դրսեւորումների մասին հաղորդել է «ՀԵՑ»-ին՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք նա ստացել է աշխատանքի վայրում՝ ունենալով արտոնյալ հասանելիություն նշված տեղեկություններին՝ այդ ժամանակ հանդես գալով որպես Անվտանգության եւ վարչական հարցերի դեպարտամենտի պետ:

Հետեւաբար նա կարող է համարվել «այն միակ անձը կամ անձանց փոքր խմբի մասնիկը, որը տեղեկացված է եղել այն մասին, թե ինչ է կատարվում աշխատավայրում եւ այդպիսով, ունեցել է լավագույն հնարավորությունները գործելու ի նպաստ հանրային շահի՝ այդ մասին զգուշացնելով գործատուին կամ լայն հասարակությանը» (հակադրության համար տե՛ս Վոյչուկն ընդդեմ Լեհաստանի գործը [Wojczuk v. Poland], թիվ 52969/13, § 85, 2021 թվականի

դեկտեմբերի 9, որի դեպքում դիմումատուն անանուն հաղորդումով իրավասու մարմիններին հայտնում է իր գործատուի առնչությամբ ֆինանսական եւ ծառայողական բնույթի թերությունների մասին՝ չունենալով հասանելիություն վերջինիս ֆինանսական փաստաթղթերին կամ որեւէ տեղեկություն՝ իր գործընկերների կողմից վատ կառավարման կամ ոչ պատշաճ գործունեության դեպքերի մասին): Ավելին, որպես իր հաղորդումը ներկայացնելու ուղղակի հետեւանք, նա ենթարկվել է քաղաքացիական պատասխանատվության: Հետեւաբար, չնայած սույն գործի առանձնահատուկ համատեքստին, Դատարանը, այնքանով, որքանով դա կհամարի նպատակահարմար, կկիրառի Գուջայի գործով սահմանված (§§ 72-78) եւ Հալեթի գործով վերահաստատված (§§ 121-54) ընդհանուր չափանիշներն ու սկզբունքները՝ հետեւյալի գնահատման համար.

- ա) արդյո՞ք եղել են տեղեկության տարածման այլընտրանքային ուղիներ.
- բ) տարածված տեղեկության նկատմամբ հանրային շահը.
- գ) տարածված տեղեկության հավաստիությունը.
- դ) գործատուին պատճառած վնասը.
- ե) արդյո՞ք ազդարարը գործել է բարեխղճորեն.
- զ) պատասխանատվության միջոցի խստությունը:

48. Դատարանը նաեւ նշում է, որ ազդարարներին ցուցաբերվող մոտեցումը եւ վերը նշված չափանիշները նախադեպային իրավունքում ձեւավորվել են մինչեւ սույն գործով նկարագրված դեպքերը: Հետեւաբար լուրջ այն փաստը, որ ազդարարների համար նախատեսված պաշտպանության ռեժիմը ներպետական օրենսդրության մեջ ներդրվել է միայն սույն գործով տեղի ունեցած դեպքերից հետո, ներպետական դատարաններին չի ազատել համապատասխան իրավունքները կամ շահերը Դատարանի կողմից նախատեսված ընթացակարգերին համապատասխան եւ դրա կողմից սահմանված

չափանիշներով գնահատելու իրենց պարտականությունից (համեմատության համար տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործը, § 162), ինչպես, ըստ երեւոյթին, պնդում է Կառավարությունը (տե՛ս վերելում՝ 36 պարբերությունը):

iii) Սույն գործի նկատմամբ վերոնշյալ սկզբունքների կիրառումը

49. Դատարանը նախ նկատում է, որ ներպետական դատարանները տվյալ գործը դիտարկել են որպես զրպարտության շուրջ սովորական վեճ եւ չեն կիրառել վերոնշյալ սկզբունքները: Ճիշտ է, որ դիմումատուն կոնկրետ չի հիմնվել ազդարարների համար նախատեսված արտահայտվելու ազատության պաշտպանության վրա, այլ հղում է կատարել պետական պաշտոնյաների վարքագծի կանոնների խախտման մասին հաղորդումների ներկայացման վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքին: Այդուհանդերձ, նա ներկայացրել է մի շարք փաստարկներ, որոնք վերաբերել են ազդարարների հետ կապված գործերի դեպքում կիրառվող չափանիշներին, եւ այդպիսով ներպետական դատարաններին հնարավորություն են ընձեռել իր գործի վերաբերյալ որոշում կայացնել այդ տեսանկյունից (տե՛ս վերելում՝ 19 պարբերությունը):

50. Հետեւաբար Դատարանը կգնահատի, թե ինչպես են ներպետական դատարաններն արձագանքել դիմումատուի փաստարկներին, եւ որոշում կկայացնի վերելում նշված 47 պարբերության մեջ ներկայացված սկզբունքներին եւ չափանիշներին համապատասխանության մասին, եւ անհրաժեշտության դեպքում դրանք ինքը կկիրառի սույն գործում (համեմատության համար տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործը, § 158):

1) Հաղորդում ներկայացնելու ներքին ուղիները

51. Ի տարբերություն Դատարանի կողմից նախկինում քննված գործերի (տե՛ս վերելում՝ 45-րդ պարբերությունը)՝ սույն գործով դիմումատուն ոչ իրավաչափ վարքագծի ենթադրյալ գործողությունների մասին հաղորդումը չի ներկայացրել իրավասու պետական մարմիններին կամ մամուլին: Փոխարենը, նա ընտրել է հաղորդում ներկայացնելու ներքին ուղիները եւ իր հաղորդումը ներկայացրել իր նախկին աշխատավայրի ղեկավարությանը՝ ի պատասխան այդպիսի տեղեկություններ հաղորդելու վերաբերյալ վերջինիս հորդորին: Ավելին, Ընկերությունը խոստացել է, որ այդ մասին ներկայացված բոլոր հաղորդումները կմնան անանուն եւ գաղտնի: Դիմումատուն ներպետական դատարաններում նշել է, որ նա օգտվել է հավանական ծառայողական խախտման քննության համար Ընկերության կողմից սահմանած ընթացակարգից եւ իր անձնական էլեկտրոնային փոստով իր հաղորդումն ուղարկել է այն մարմին, որին վերապահված է գաղտնի ընթացակարգի մաս ներկայացվող այդպիսի հաղորդումների քննության գործառույթը: Այնուամենայնիվ, մարզային դատարանը որպես ապացույց չի ընդունել Ընկերության առցանց հայտարարության օրինակը եւ մերժել է դիմումատուի փաստարկները՝ նշելով, որ «ՀԷՑ»-ում աշխատանքից հեռանալուց հետո նման հարցերի մասին հաղորդում ներկայացնելը նրա իրավասության շրջանակում չէ (տե՛ս վերելում՝ 18 պարբերությունը): Վերաքննիչ դատարանն իր հերթին պարզապես նշել է, որ դիմումատուն վիճարկվող տեղեկությունը տրամադրել է քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով «երրորդ անձի» եւ այդպիսով «հանրայնացրել է» այն (տե՛ս վերելում՝ 20 պարբերությունը):

52. Դատարանի կարծիքով՝ մերժելով դիմումատուի վերոնշյալ փաստարկները՝ ներպետական դատարանները հաշվի չեն առել գործի ընդհանուր համատեքստը: Մասնավորապես, ինչպես նշվել է վերելում, սույն գործի առանձնահատկությունը նաեւ այն փաստն է, որ դիմումատուն չի դիմել հրապարակայնորեն տարածելուն, փոխարենը նա օգտվել է հաղորդում

ներկայացնելու միայն ներքին մեխանիզմից, որն ամենամոտն է եղել խնդրի աղբյուրին, եղել է առավել հարմար քննության անցկացման համար եւ նախատեսել է դրա համար հատուցում տրամադրելու լիազորություններ եւ ավելին, որը ենթադրվել է, որ պետք է լիներ խիստ գաղտնի: Ներքին քննության կոնկրետ նպատակը նրա պնդումները հաստատելը կամ հերքելն էր: Ինչպես նշվել է վերելում՝ 46 պարբերության մեջ, աշխատավայրում ենթադրյալ խախտումների հիմքով նախկին աշխատակիցներին մեղադրելու առնչությամբ ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանությունը չի կարող մերժվել միայն այն հիմքով, որ նրանց աշխատանքային հարաբերությունները դադարել են: Դատարանն ընդգծում է ազդարարների կարեւոր առաջատար դերը, որը նրանք կարող են ունենալ հանրային շահ ներկայացնող տեղեկությունները բացահայտելու գործում (տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործը, § 120), ինչը թույլ է տալիս ապահովել հաշվետվողականություն ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագծի համար եւ հայտնաբերել նրանց, ովքեր կարող են պատասխանատվության ենթարկվել պատճառված ցանկացած վնասի համար:

53. Բացի այդ, Դատարանի համար դժվար է հասկանալ, թե ինչպես են ներպետական դատարանները գտել, որ «հրապարակայնորեն» արված կարող է համարվել դիմումատուի կողմից հաղորդում ներկայացնելը Յ.Մ.-ին՝ Ընկերության տնտեսական անվտանգության եւ վարչական հարցերով տնօրենին, որը, ինչպես հետելում է Վերաքննիչ դատարանի որոշումից, պատասխանատու է եղել ներքին հարցման շրջանակներում ներկայացված բողոքների քննության համար (տե՛ս վերելում՝ 20 պարբերությունը): Ավելին, դիմումատուին իր հաղորդման գաղտնիությունն ապահովելու բոլոր միջոցները չձեռնարկելու մեջ մեղադրելիս (տե՛ս վերելում 18 պարբերությունը) մարզային դատարանը չի նշել, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկեր դիմումատուն, եթե նա գիտեր, որ ընկերությունը խոստացել է պահպանել հաղորդումների գաղտնիությունը: Այս ձեւական մոտեցումը ոչ միայն ոտնահարում է նրա պաշտպանության իրավունքները, այլ կարող է բացասաբար ազդել ցանկացած նախկին կամ ներկա աշխատողի վրա,

որը որոշում է գործատուին տեղեկացնել իր գործող աշխատակիցների որեւէ ծառայողական խախտման մասին:

2) հաղորդվող տեղեկության առնչությամբ հանրային շահը

54. Անդրադառնալով դիմումատուի հաղորդման բովանդակությանը՝ Դատարանը նկատում է, որ այն հիմնականում վերաբերել է այն ժամանակ «ՀԷՑ»-ում ավագ պաշտոն զբաղեցնող աշխատակցի՝ Վ. Բ.-ի կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման, ոչ պատշաճ վարքագծի եւ կոռուպցիոն գործունեության դրսեւորման դեպքերին: Դատարանը նախկինում պարզել է, որ անօրինական գործողությունների կամ գործելակերպի վերաբերյալ տեղեկությունները միանշանակ ներկայացնում են խիստ հատուկ հանրային շահ (տե՛ս վերելում հիշատակած Հալեթի գործը, §§ 134-35 եւ 141), նույնիսկ այն դեպքում, երբ դրանք վերաբերում են մասնավոր ընկերությունների տնօրենների հաշվետվողականությանը (տե՛ս Պետրո Կարբո Չեմ Ս. Ե.-ն ընդդեմ Ռոմինիայի [Petro Carbo Chem S.E. v. Romani], թիվ 21768/12, § 43, 2020 թվականի հունիսի 30) կամ հանրային շահ ներկայացնող կազմակերպության կողմից հարկային պարտավորությունները չկատարելուն (տե՛ս Պուբլիկո-Կոմունիկացիո Սոշալ, Ս.Ա. եւ այլք ընդդեմ Պորտուգալիայի [Público - Comunicação Social, S.A. and Others v. Portugal], թիվ 39324/07, § 47, 2010 թվականի դեկտեմբերի 7): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «ՀԷՑ»-ը չի եղել սովորական մասնավոր ընկերություն: Այն Հայաստանի էլեկտրաէներգիայի հիմնական մատակարարն էր, եւ ըստ երեւոյթին, նրա որոշ որոշումների համար պետք է ձեռք բերվեր կառավարության նախնական հավանությունը (տե՛ս 8 պարբերության մեջ մեջբերված դիմումատուի հաղորդման մեջ ներկայացված 7-րդ հայտարարությունը, որը կառավարությունը չի վիճարկել, տե՛ս նաեւ վերելում՝ 23 պարբերությունը): Որպես այդպիսին, «ՀԷՑ»-ի եւ դրա աշխատակիցների նկատմամբ իրականացվել է ավելի լայն հանրային վերահսկողություն, եւ դրա պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման եւ

կոռուպցիոն գործողությունների վերաբերյալ ցանկացած պնդումների վերաբերյալ քննությունը, անկասկած, բխել է հանրային շահերից (համեմատության համար տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործով նշված նախադեպային իրավունքը, § 134):

55. Ներպետական դատարանները, սակայն, ողջամիտ ձեռով հաշվի չեն առել դիմումատուի այն փաստարկները, որ իր հաղորդումը կատարվել է հանրային շահերից ելնելով (համեմատության համար տե՛ս վերելում հիշատակված Բուկուրը եւ Տոմայի գործը, § 104): Մարզային դատարանը մասնավորապես մերժել է այն այնպիսի հիմքով, որ «գերակա հանրային շահ» ներկայացնող պատճառներով տեղեկության տարածումը նախատեսված է լրատվամիջոցների ներկայացուցիչների, այլ ոչ թե դիմումատուի նման սովորական քաղաքացիների համար, մինչդեռ Վերաքննիչ դատարանը պարզապես հաստատել է այս եզրահանգումը (տե՛ս վերելում՝ 18 եւ 20 պարբերությունները): Այսպիսով, ներպետական դատարանները դիմումատուի հաղորդման բովանդակությունը չեն դիտարկել հանրային շահի տեսանկյունից եւ ավելին, էապես սահմանափակել են հանրային շահ ներկայացնող հարցերի մասին ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանության շրջանակը, ինչը, Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, չի սահմանափակվում զանգվածային լրատվամիջոցներով, այլ իրացվում է լայն հասարակության կողմից:

3) Հաղորդում ներկայացնելու բացասական ազդեցությունը

56. Դատարանը վերահաստատում է, որ տեղեկության տարածման դեպքերը կարող են վնասել ընկերությունների մասնագիտական հեղինակությանը եւ գործարար շահերին, դրանց առետրային գործունեության արդյունավետությանը եւ կենսունակությանը՝ ի շահ բաժնետերերի եւ աշխատակիցների, ինչպես նաեւ ավելի լայն տնտեսական բարեկեցության

տեսանկյունից (տե՛ս, համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) վերելում հիշատակված Հեյնիշի գործը, §§ 88 եւ 89): Սույն գործով ներպետական դատարանները չեն դիտարկել այդ հարցը: Դատարանում չի վիճարկվել նաեւ դիմումատուի նախկին գործատուին վնաս պատճառելու հարցը: Այդ հանգամանքներում Դատարանը կարիք չունի հարցը քննել սեփական միջնորդությամբ: Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից Վ. Բ.-ին հաղորդում ներկայացնելու բացասական հետեւանքների (տե՛ս վերելում՝ 42 պարբերությունը), ապա Դատարանը վերահաստատում է, որ դիմումատուն իր հաղորդումը ներկայացրել է՝ օգտվելով հաղորդումներ ներկայացնելու ներքին ընթացակարգից, եւ հետեւաբար Վ.Բ.-ի հեղինակության վրա ցանկացած ազդեցության շրջանակ սահմանափակ է: Հիմքեր չկան ենթադրելու, որ դիմումատուի հաղորդման առնչությամբ մեկնարկած ներքին քննությունը չափազանց մեծ վնաս է հասցրել Վ.Բ.-ի հեղինակությանը: Ներպետական դատարանները չեն բացատրել, թե ինչու է այդպիսի վնասը, որի բնույթն ու շրջանակը, ընդ որում, չեն որոշվել, կարելի է ավելի, քան «ՀԷՑ»-ում հաշվետվողականություն ապահովելու նպատակով ծառայողական խախտման ենթադրյալ գործողությունների մասին ներքին հաղորդում ներկայացնելու ընդհանուր շահը (համեմատության եւ հակադրության համար տե՛ս վերելում հիշատակված Բրչկո իսլամական համայնքի մեջլիսը եւ այլք գործը, §§ 105-106, որտեղ դիմումատու ՀԿ-ի հաղորդումը հետագայում հայտնվել է մամուլում՝ մեծացնելով հաղորդման սուբյեկտի վրա բացասական ազդեցությունը):

- 4) տարածվող տեղեկության հավաստիությունը եւ բարեխղճությունը

57. Ինչ վերաբերում է տեղեկության հավաստիությանը, ապա ներպետական դատարանները, հղում կատարելով «ՀԷՑ»-ում անցկացված ներքին քննության արդյունքներին, գտել են, որ դիմումատուն չի ապացուցել իր հաղորդման ճշմարտացիությունը (տե՛ս վերելում՝ 18 եւ 20 պարբերությունները):

Այս կապակցությամբ Դատարանն արդեն ընդունել է, որ որոշակի հանգամանքներում ազդարարների կողմից տրամադրվող տեղեկության վրա կարող է տարածվել ազատ արտահայտվելու իրավունքը, նույնիսկ եթե հետագայում ապացուցվել է, որ տվյալ տեղեկությունը կեղծ է կամ հնարավոր չի եղել ապացուցել, որ այն ճիշտ է: Այնուամենայնիվ, դա կիրառելու համար ազդարարը պետք է ուշադիր ստուգի տեղեկության ճշմարտացիությունը եւ հավաստիությունը: Այսպիսով, այն ազդարարները, որոնք ցանկանում են ստանալ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանություն, պետք է դրսեւորեն պատասխանատու վարքագիծ նախքան տեղեկությունը հանրայնացնելը՝ հնարավորության դեպքում համոզվելով, որ այն տեղեկությունը, որ նրանք ցանկանում են բացահայտել, հավաստի է (տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործը, § 127):

58. Դատարանը նաեւ հղում է կատարում (2014)7 հանձնարարականի բացատրական հուշագրում շարադրված սկզբունքին (տե՛ս վերելում՝ 29 պարբերությունը), որով նախատեսվում է, որ «[ն]ույնիսկ այն դեպքերում, երբ անձը կարող է հիմքեր ունենալ ենթադրելու, որ կա խնդիր, որը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ, հազվադեպ է պատահում, որ նրանք տեղեկացված լինեն ամբողջական պատկերի մասին: Հետեւաբար անխուսափելի է ..., որ տեղեկությունների հաղորդման կամ տարածման հետագա քննությունը կարող է ցույց տալ, որ ազդարարը սխալվել է» (տե՛ս բացատրական հուշագիրը, Հավելված, § 85): Հավասարապես, ինչպես հայտարարել է ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, այն ընդունում է, որ «այն ազդարարները, որոնք ելնելով ողջամիտ հիմքերից, հաղորդում են տեղեկություններ, որոնք, ինչպես պարզվում է, չեն համապատասխանում իրականությանը, այնուամենայնիվ, պետք է պաշտպանված լինեն վրեժխնդրությունից» (տե՛ս վերելում՝ 28 պարբերությունը): Այդ հանգամանքներում ցանկալի է, որ քննարկվող անձը չզրկվի ազդարարների համար նախատեսված պաշտպանության արտոնություններից՝ պայմանով, որ պահպանվեն այդ պաշտպանության իրավունքը ստանալու համար նախատեսված

պահանջներին համապատասխանությունը (տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործը, § 125):

59. Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը նախ նկատում է, որ ինչպես նշված է դիմումատուի հաղորդման մեջ, 1-ին հայտարարությամբ հայտնած տեղեկությունները հրապարակվել են տեղական լրատվամիջոցներում եւ խորհրդարանի նախկին պատգամավորի հայտարարության մեջ (տե՛ս վերելում՝ 8 պարբերությունը), որը դիմումատուն ակնհայտորեն տրամադրել է ներպետական դատարաններին (համեմատության եւ հակադրության համար տե՛ս վերելում հիշատակված Բրչկո իսլամական համայնքի մեջլիսը եւ այլք գործը, § 100): Այդուհանդերձ, դատարանները նախ մերժել են այդ հայտարարությունը հիմնավորող ապացույցները, այնուհետեւ նախատել դիմումատուին՝ հաղորդման մեջ հայտարարության աղբյուրը չնշելու համար (տե՛ս վերելում՝ 18, 19 եւ 20 պարբերությունները), որի արդյունքում համարել են, որ դիմումատուն այդ հայտարարության հեղինակն է: Ինչ վերաբերում է մնացած հայտարարություններին, Դատարանը նկատում է, որ դիմումատուն նախկինում զբաղեցրել է «ՀԵՑ»-ի անվտանգության եւ վարչական հարցերի դեպարտամենտի պետի պաշտոնը, եւ ինչպես նա է պնդել, իր հաղորդումը հիմնված է եղել այն տեղեկությունների վրա, որոնք նա ստացել է որպես «ՀԵՑ»-ում ավագ պաշտոն զբաղեցնող նախկին աշխատակից, որը պատասխանատու է ոչ իրավաչափ վարքագծի դրսեւորումների քննության համար (տե՛ս վերելում՝ 5, 8, 19 եւ 34 պարբերությունները): Թեեւ Դատարանին չեն ներկայացվել Ընկերության ներքին քննության արդյունքներն այնպես, ինչպես դրանք ամփոփվել են ներպետական դատարանների վճիռներում, դիմումատուի որոշ հայտարարություններ չհիմնավորված չեն համարվել (տե՛ս վերելում՝ 11 եւ 12 պարբերությունները): Միեւնույն ժամանակ, թեեւ դիմումատուն իր հաղորդման հետ միասին Ընկերությանը որպես ապացույց ներկայացրել է որոշակի նյութեր (տե՛ս վերելում՝ 8 պարբերության մեջ հիշատակված 3-րդ հայտարարությունը եւ դիմումատուի հաղորդման վերջին պարբերությունը), նա հետագայում չի կարողացել ստուգել

դրանք, քանի որ այլևս չի աշխատել «ՀԷՑ»-ում (հակադրության համար տե՛ս վերելում հիշատակված Գավլիկի գործը, §§ 77-78): Մարզային դատարան ներկայացրած նրա պահանջը՝ «ՀԷՑ»-ից այնպիսի ապացույցներ պահանջելու մասին, որոնք ինքը չէր կարող ձեռք բերել, ինչպես նաև այդ կապակցությամբ նրա հետագա բողոքարկումները մնացել են անարդյունք (տե՛ս վերելում՝ 18, 19 եւ 20 պարբերությունները):

60. Ինչ վերաբերում է նրա բարեխղճությանը, Դատարանը նշում է, որ գործի նյութերից հնարավոր չէ ենթադրել, որ վիճարկվող հայտարարություններն ուղղված են եղել գլխավորապես Վ. Բ.-ին մեղադրելուն: Կառավարության պնդումները, որ նա իր հաղորդումը ներկայացրել է՝ ելնելով անձնական թշնամանքից, չեն քննարկվել, առավել եւս չեն հաստատվել ներպետական դատարանների կողմից: Հատկանշական է, որ իր հաղորդման մեջ դիմումատուն մասնավորապես խնդրել է Ընկերությանը «ստուգել ներկայացված փաստերը», եւ ինչպես ներկայացվել է վիճարկվող վարույթի իր բողոքում, նրա նպատակը եղել է այն, որ Ընկերությունը քննի հաղորդման մեջ ներկայացված տեղեկությունը (տե՛ս վերելում՝ 8 եւ 19 պարբերությունները): Հետեւաբար նա տեղեկացրել է իրավասու ներպետական մարմնին այն վարքագծի մասին, որը, իր կարծիքով, եղել է տարօրինակ եւ անօրինական (հակադրության համար տե՛ս վերելում հիշատակված Բրչկո իսլամական համայնքի մեջլիսը եւ այլք գործը, §§ 102-103): Այս համատեքստում տեղեկության տարածման հասցեատերերը եւս դիմումատուի բարեխղճության գնահատման տարր են (տե՛ս վերելում հիշատակված Հալեթի գործը, § 128, եւ հակադրության համար տե՛ս Բալենովիչն ընդդեմ Խորվաթիայի (որոշում) [Balenović v. Croatia (dec.)], թիվ 28369/07, 2010 թվականի սեպտեմբերի 30): Ինչպես նշվել է վերելում, դիմումատուն չի դիմել լրատվամիջոցների կամ որեւէ այլ արտաքին՝ քննության իրականացման մարմնի, այլ փորձել է Ընկերության ներսում շտկել այն իրավիճակը, որի դեմ բողոք է ներկայացվել (տե՛ս 51 եւ 52 պարբերությունները):

5) պատասխանատվության միջոցի խստությունը

61. Վերջապես, ինչ վերաբերում է դիմումատուի դեմ հարուցված քաղաքացիական գործի արդյունքում նրա նկատմամբ կիրառված միջոցի խստությանը, ներպետական դատարանները պարտավորեցրել են նրան «հրապարակային ներողություն» խնդրել եւ սահմանել են վնասի փոխհատուցման էական գումար:

62. Տեղեկություններ չկան այն մասին, թե դիմումատուն հրապարակային ներողություն խնդրել է, թե՛ ոչ: Նույնիսկ եթե դիմումատուն ներողություն խնդրել է, Դատարանը համարում է, որ վնասի փոխհատուցման մասին որոշմամբ սահմանված գումարը, այնուամենայնիվ, եղել է շատ մեծ, քանի որ արդյունքում ԴԱՀԿ-ի կողմից առգրավվել է դիմումատուի բնակարանը եւ մեքենան՝ հրապարակային աճուրդում վաճառելու նպատակով: Չնայած դիմումատուի գույքի վաճառքի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են, Դատարանը համոզված է, որ դա կարող էր անհամաչափ ազդեցություն ունենալ դիմումատուի վրա:

6) Եզրակացությունը

63. Դատարանը, կշռադատելով ներկայացված բոլոր շահերը, եզրակացնում է, որ միջամտությունը դիմումատուի՝ արտահայտվելու ազատության իրավունքին «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում»:

64. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

65. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

1. Նյութական վնասը

66. Դիմումատուն պահանջել է 10 928 եվրո, որը, ըստ նրա, եղել է 6 034 000 ՀՀ դրամին համարժեք. գումարը գնահատվել է ավտոմեքենայի եւ բնակարանի հրապարակային աճուրդի հարցերով փորձագետների կողմից՝ մարզային դատարանի նշանակած վնասի հատուցման գումարը ծածկելու համար: Վերոնշյալ գումարը հաշվարկվել է ԴԱՀԿ-ի որոշման կայացման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով (տե՛ս վերելում՝ 22 պարբերությունը): Նա նաեւ պահանջել է 170 եվրո (92 128 ՀՀ դրամին համարժեք)՝ որպես կատարողական ծախսի գումար, որը նախատեսվել է գանձել նրա գույքի վաճառքից:

67. Դատարանը նկատում է, որ չնայած այն հանգամանքին, որ ԴԱՀԿ-ի կողմից հանրային աճուրդում դիմումատուի գույքը վաճառելու վերաբերյալ կայացված համապատասխան որոշումները ենթակա են կատարման, որեւէ տեղեկություն չի ներկայացվել այն մասին, թե արդյոք նրա գույքը վաճառվել է, եւ առավել եւս, այն մասին, թե արդյոք այդ գույքի վաճառքից գանձվել են կատարողական ծախսի գումարներ: Հաշվի առնելով դիմումատուի կողմից փաստացի կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը՝ Դատարանը համարում է, որ նյութական վնասի նկատմամբ 41-րդ հոդվածի կիրառման հարցի շուրջ դեռեւս չի կարող կայացվել որոշում:

Հետեւաբար հարցի քննությունը պետք է հետաձգվի՝ պատշաճ կերպով դիտարկելով պատասխանող պետության եւ դիմումատուի միջեւ համաձայնություն ձեռք բերելու հնարավորությունը (Դատարանի կանոնակարգի 75-րդ կանոնի 1-ին եւ 4-րդ կետեր):

2. Ոչ նյութական վնասը

68. Դիմումատուն պահանջել է 7 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

69. Դատարանը, իր գնահատումը կատարելով արդարության սկզբունքի հիման վրա, ոչ նյութական վնասի փոխհատուցման մասով դիմումատուին շնորհում է 4 500 եվրո՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

70. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք փաստացի կատարվել են՝ անհրաժեշտությունից ելնելով, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ (տե՛ս Մագյար Կեյտֆարկու Կուտյա Պայտն ընդդեմ Հունգարիայի [ՄՊ][Magyar Kétfarkú Kutya Párt v. Hungary] [GC], թիվ 201/17, § 125, 2020 թվականի հունվարի 20):

71. Դիմումատուն պահանջել է 554 եվրո (200 000 դրամին համարժեք)՝ որպես Վերաքննիչ եւ Վճարեկ դատարաններում առաջացած դատական ծախսերի հատուցում: Նա նաեւ պահանջել է 1 250 եվրո (650 000 դրամին համարժեք)՝ որպես ներպետական դատարաններում իր իրավաբանական ներկայացուցչությունն ապահովելու հետ կապված ծախսերի փոխհատուցում, եւ 720 000 դրամ՝ որպես Դատարանում առաջացած իրավաբանական ծախսերի փոխհատուցում: Ինչ վերաբերում է առաջինին, ապա նա ներկայացրել է

վստահորդի եւ փաստաբանի միջեւ կնքված պայմանագիրը, որի համաձայն պարտավորվել է իր փաստաբանի ծառայությունների համար վճարել միայն առաջին ատյանի դատարանում գործի դրական ելքի դեպքում, իսկ ինչ վերաբերում է երկրորդ պահանջին, նա ներկայացրել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի համաձայն նա պարտավորվել է վճարել 720 000 դրամ Դատարանում գործն ի օգուտ իրեն լուծվելու դեպքում:

72. Դատարանը դիտարկում է, որ դիմումատուն հիմնավորել է դատական ծախսերի վճարման հանգամանքը: Ինչ վերաբերում է ներպետական դատարաններում իր իրավաբանական ներկայացուցչությունն ապահովելու հետ կապված ծախսերը փոխհատուցելու իր պահանջին, ապա Դատարանը չի համարում, որ դիմումատուն ունեցել է վստահորդի եւ փաստաբանի միջեւ կնքված պայմանագրով նախատեսված՝ ազգային մակարդակում մատուցվող ծառայությունների համար իր փաստաբանին վճարելու պարտավորություն: Մյուս կողմից՝ այն շնորհում է իր իրավաբանական ներկայացուցչությունն ապահովելու համար պահանջված բոլոր ծախսերի համար հատուցում (տե՛ս Մնացականյանն ընդդեմ Հայաստանի [Mnatsakanyan v. Armenia] թիվ 2463/12, § 101, 2022 թվականի դեկտեմբերի 6 եւ գործում հիշատակված մարմինները):

73. Հետեւաբար հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերը եւ վերոնշյալ չափանիշները՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 2,000 եվրո՝ որպես այս մասով կրած ծախսերի՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկի դիմաց հատուցում:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մասով գանգառն ընդունելի.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում.

3. Վճռում է, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսված նյութական վնասի հարցի վերաբերյալ դեռևս չի կարող կայացվել որոշում եւ համապատասխանաբար՝

ա) ամբողջությամբ հետաձգում է նշված հարցի քննությունը.

բ) հրավիրում է կողմերին վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն վերջնական դառնալուց հետո վեց ամսվա ընթացքում ներկայացնել հարցերի վերաբերյալ իրենց գրավոր դիտարկումները եւ մասնավորապես Դատարանին ծանուցել իրենց կողմից ձեռք բերված ցանկացած համաձայնության մասին.

գ) հետաձգում է հետագա ընթացակարգը եւ Պալատի նախագահին վերապահում է նույնը սահմանելու իրավունք, եթե նման անհրաժեշտություն լինի:

4. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 4,500 եվրո (չորս հազար հինգ հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 2 000 եվրո (երկու հազար եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ,

5. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2024 թվականի օգոստոսի 27-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր՝

Նախագահ

Սիմեոն Պետրովսկի՝

Քարտուղարի տեղակալ